ԱԶԱՏԱԳՐՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

azatagrum@netsys.am, հեռախոս՝ (010) 51 61 68, 52 21 28

Գ

#2 (3)
6 ՄԱՅԻՍ
2006

ՋԱՎԱԽՔԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼՆ ԱՐԳԵԼՎԱԾ Է

Վերջին շրջանում ՀՀ ազգային անվտանգության ծառայությունն աննախադեպ ակտիվություն է դրսևորում Ջավախքի խնդրում: Սակայն տարօրինակն այն է, որ տեղական չեկիստները նախընտրում են գործել ոչ թե արտաքին, այլ ներքին ճակատում: Փոխանակ ինչ-որ կերպ օժանդակելու ջավախքահայությանը, որպեսզի վերջինս կարողանա պաշտպանվել վրացական իշխանությունների ոտնձգություններից, այդ ծառայության աշխատակիցները «դաստիարակչական զրույցի» են կանչում նրանց, ովքեր համարձակվում են բողոքի ձայն բարձրացնել վրացական իշխանությունների սադրած հակահայ արարքների և Հայաստանի իշխանությունների անտարբերության դեմ: Մասնավորապես, մարտին Ծալկայի իրադարձությունների կապակցությամբ ԱԱԾ էին հրավիրվել մի շարք անձինք և զգուշացվել, որ կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել՝ միջպետական թշնամանք հրահրելու մեղադրանքով: Փաստորեն, ստացվում է, որ հայ մարդուն Հայաստանում արգելվում է խոսել Ջավախքի մասին: Մեղադրանքը, իհարկե, անհեթեթ է, սակայն այն զուգակցվում է նաև քաղաքական փաստարկներով այն մասին, թե ինչու հայերը չպետք է բարձրացնեն Ջավախքի հարցը:

Առաջին փաստարկն այն է, որ Ջավախքը Վրաստանի տարածքն է, և մենք Հայաստանից իրավունք չունենք միջամտելու հարևան պետության ներքին գործերին: Սակայն որքան Արցախն է Ադրբեջանի տարածք, նույնքան էլ Ջավախքը՝ Վրաստանի: Խորհրդային տարիներին Ջավախքը Հայաստանից բաժանող սահմանը միշտ էլ արհեստական է եղել: Ջավախքցիները երբեք չեն զգացել, որ իրենք ապրում են միութենական այլ հանրապետությունում: Փաստն այն է, որ նրանք մինչ օրս վրացերեն խոսել չգիտեն և չեն էլ ուզում սովորել: Ջավախքցիներին Վրաստանի հետ կապող ոչ մի բան չկա: Ջավախքի մասին խոսելը Հայաստանի մասին խոսել է նշանակում, իսկ ջավախքահայերի հիմնախնդիրը բոլոր հայերի հիմնախնդիրն է: Ոչ մի արհեստածին, այս կամ այն ավազակապետի կողմից գծված սահման չի կարող բաժանել ժողովուրդը և հայրենիքը հատվածների:

Երկրորդ փաստարկը վերաբերում է Հայաստանի վերջին ճանապարհը փակելու խնդրին: Վերջին տարիներին, երբ ջավախքահայությունը պարբերաբար փորձել է իր իրավունքները պաշտպանել վրացիների կամայականություններից, Հայաստանից միշտ ինչ-որ մարդիկ են գնացել այնտեղ, խնդրել և նույնիսկ պահանջել են՝ մի արեք, մի փակեք մեր վերջին ճանապարհը: Վրացական իշխանությունները միշտ էլ օգտվել են սրանից և քայլ առ քայլ փորձել ու փորձում են հայ բնակչությանը դուրս մղել Ջավախքից: Ինչ վերաբերում է «վերջին ճանապարհին», ապա դրա անվտանգության երաշխավորը հենց Ջավախքի հայությունն է: Այն օրը, երբ ջավախքցին կլքի իր օջախը, այդ օրը Հայաստանի շրջափակումը կատարյալ կդառնա:

Վերջապես երրորդ փաստարկը պատերազմի հավանականությունն է: Տպավորություն է ստեղծվում, թե ջավախքցին է այն հրահրողը: Մի՞թե վրացական իշխանությունները ոչինչ չեն անում, և ջավախքցին հենց այնպես բողոքում է: Իսկ եթե Վրաստանն իսկապես երկրամասը հայաթափելու նպատակ ունի, ապա պատերազմից խուսափելու միակ ձևը նրա այդ ցանկությունը բավարարելն է: Արդյո՞ք հանուն խաղաղության մենք համաձայն ենք, որ Ջավախքը հայաթափվի: Եթե նույնիսկ Երևանում նստած ինչ-որ մեկը դրան համաձայն է, արդյո՞ք ջավախքցին պարտավոր է լքել իր օջախը հանուն այդպիսի խաղաղության: Իսկ եթե ջավախքցին չի ուզում լքել իր օջախը հանուն խաղաղության, Հայաստանում բնակվող որևէ մեկն արդյոք իրավունք չունի՞ սատարել նրան իր արդար պայքարում: Ի վերջո, եթե ջավախքցու պայքարն արդար է, մենք նրան սատարելու իրավո՞ւնք ունենք միայն, թե՞ նաև պարտավոր ենք դա անել:

Վրացիները մեզնից լավ գիտեն, որ Ջավախքը փաստացի իրենցը չէ, այն դեռ նոր պիտի գրավեն, եթե, իհարկե, կարողանան: Ուրեմն, ո՞ւմ անվտանգությանն է ծառայում Հայաստանի ԱԱԾ-ն, որի գործողությունները զարմանալիորեն հիշեցնում են Արցախյան շարժման օրերին խորհրդային ՊԱԿ-ի գործունեությունը:

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԳԱՂԹ...

Հայաստանում համատարած աղքատությունը, գործազրկության կայուն բարձր մակարդակը և չդադարող զանգվածային արտագաղթը տնտեսական խոր ճգնաժամի վկայությունն են: Դրանք, իրավամբ, կարելի է որակել որպես Հայաստան պետությանը և հայ ժողովրդի գոյությանն ուղղված սպառնալիք: ***Սակայն արդյո՞ք մենք խորությամբ հասկանում ենք հիմնախնդրի էությունը, որպեսզի ի վիճակի լինենք լուծել այն:***

Քաղաքական դաշտում տնտեսական հարցերը շատ պարզունակ ձևակերպում ունեն: Իշխանությունների տեսակետից դժվարությունները պայմանավորված էին պատերազմով, շրջափակմամբ, երկրաշարժի հետևանքներով, իսկ իրենք անում են հնարավոր ամեն ինչ՝ դրանք հաղթահարելու համար, արդյունքներն էլ աստիճանաբար երևում են:

Ընդդիմադիրների պատասխանը մեկն է. բոլոր դժվարություններով հանդերձ՝ երկրի տնտեսության վիճակը շատ ավելի տանելի կլիներ, եթե չլինեին թալանը, կոռուպցիան, ստվերը, իսկ դրանց պատասխանատուն, միանշանակ, իշխանությունն է: Բացի այդ, տնտեսական այն փոքր աճը, որ գրանցվում է, բոլորովին էլ իշխանությունների շնորհքը չէ: Հաջողությունները կարող էին շատ ավելին լինել: Իսկ այն, ինչով պարծենում են իշխանությունները, ձեռք է բերվել շատ մեծ չափերի հասնող արտաքին պարտք կուտակելու և ազգային հարստությունը փոշիացնելու հաշվին:

Ինչպես ընդդիմության մեղադրանքները, այնպես էլ իշխանությունների վկայակոչած արդարացնող հանգամանքները հիմնավոր են թվում: Մենք էլ մեր հերթին կարող ենք վկայակոչել լրացուցիչ փաստարկներ, որոնց մի մասը կբացատրի, թե ինչքան դժվարին վիճակում է հայտնվել Հայաստանի տնտեսությունը, իսկ մյուս մասը կմատնանշի իշխանությունների հավելյալ մեղքերը: Սակայն դրանք բոլորը կլինեն ընդամենը բացատրություններ: Իսկ մեզ անհրաժեշտ է ճշգրիտ ախտորոշում, որից հետո միայն կարող ենք խոսել համարժեք դեղատոմսերի մասին:

Եթե փորձենք հասկանալ, թե ինչպես են քաղաքական ուժերն ընկալում Հայաստանի տնտեսական հիմնախնդիրները և ինչ լուծումներ են տեսնում, կհամոզվենք, որ ոչ միայն նրանք, այլև հանրությունն ընդհանրապես, ներառյալ մասնագետները, շուկայական ազատությունների ու գործարարության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու վերաբերյալ դատարկաբանությունից բացի այլ ասելիք չունեն:

Նույնիսկ մակերեսային դիտարկումների դեպքում կարելի է վստահությամբ պնդել, որ կատարյալ շուկան միայն խթանելու է արտագաղթը: Գործազրկության և աղքատության նվազեցման այլ լուծում այն պարզապես չի կարող առաջարկել: Հայաստանում այսօր առկա արտադրական հնարավորություններն ի վիճակի չեն քիչ թե շատ բարեկեցիկ կյանք ապահովել անգամ մեկ միլիոն բնակչության համար: Շուկայական միջոցներով կարճ ժամանակահատվածում դրանք եռապատկելն ուղղակի անհնար է: ***Հետևաբար՝ շուկայի առաջարկած այլընտրանքը հայ ժողովրդին մեկն է. կամ հեռացեք երկրից, կամ համակերպվեք աղքատության հետ:***

Արդյոք սա գիտակցո՞ւմ են ազատ շուկայի ջատագով քաղաքական գործիչներն ու մասնագետները, աղքատության և արտագաղթի խնդիրներով զբաղվող կազմակերպությունները: Կարծում ենք՝ ոչ: Փոխարենը դա շատ լավ են գիտակցում Հայաստանին խոշոր վարկեր տրամադրող և տնտեսական որոշակի քաղաքականություն պարտադրող միջազգային կառույցները: Նրանք շատ լավ են պատկերացնում թերբնակեցված և մինչև կոկորդը պարտքերի մեջ խրված Հայաստանը:

«Աղքատության հաղթահարման ռազմավարություն», «պայքար կոռուպցիայի դեմ», «կառուցվածքային բարեփոխումներ», «օտարերկրյա ներդրումների խթանում»... Սրանք ժողովրդի աչքին թոզ փչող բառեր են միայն: Այդ ծրագրերի մի մասն անհնար է իրագործել, իսկ մյուսները, նույնիսկ իրագործվելու դեպքում, չեն լուծելու Հայաստանի արտադրելու ունակությունը բազմապատկելու խնդիրը: Դրանց հեղինակներն իրենց առջև նման խնդիր ընդհանրապես չեն դրել: Իրականում նպատակ է դրված փոքր-ինչ մեղմել ավելորդ դարձած աշխատուժի կուտակվող դժգոհությունը, մինչև որ այն ամբողջությամբ կարտագաղթի կամ բնական ճանապարհով կվերանա:

Ուրեմն՝ փորձենք ավելի լավ հասկանալ, թե որն է Հայաստանում զանգվածային արտաքաղթի և աղքատության գլխավոր պատճառը: Հնարավո՞ր է արդյոք այն վերացնել, կամ ինչպե՞ս կարող ենք դա անել: Ընդ որում, խոսքը միայն հիմնական և առարկայական պատճառների մասին է, այլ ոչ թե լավ կամ վատ կառավարության: Պատճառների բացահայտումն անհրաժեշտ է՝ խնդիրը ձևակերպելու և լուծելու, այլ ոչ թե իշխանությունների սխալներն ու մեղքերն առարկայական հիմնավորումներով արդարացնելու համար: Ներկայացնելով հիմնախնդրի խորությունը՝ ***մենք ոչ թե արդարացնում, այլ, ընդհակառակը, ընդգծում ենք պատասխանատվության այն չափը, որից Հայաստանի կառավարիչները վերջին տարիների անչափ հեռու են եղել:***

Համատարած աղքատության պայմաններում հոգեբանորեն դժվար է համաձայնել տնտեսագետների այն պնդմանը, թե Հայաստանում ճգնաժամ չկա: Սակայն գիտական իմաստով դա հենց այդպես է: Խնդիրն այն է, որ երբ տնտեսագետներն ասում են ճգնաժամ, նկատի ունեն ոչ թե

երկրի բարեկեցության անկումը, այլ շուկայական հավասարակշռության խախտումը: Դրանք երկուսն են՝ գների արագընթաց աճն ու դրամի արժեզրկումը, ինչպես նաև արտադրության կրճատումը և դրա հետևանքով աճող գործազրկությունը: Երկու իմաստով էլ Հայաստանում հետպատերազմյան տարիներին իրավիճակը բավականին կայուն է: Իսկ այն, որ երկիրն աղքատ է, դեռ ոչինչ չի նշանակում, որովհետև կայուն աղքատությունը նույնպես կայունություն է, իսկ 50% գործազրկությունն ավելի լավ է, քան 55%-անոցը: Այսպիսով, եթե շուկայական հավասարակշռությունը չի խախտվել, ուրեմն տնտեսական ճգնաժամ չկա, առավել ևս, որ արձանագրվում է ինչ-որ զարգացում, թեկուզ՝ խիստ անբավարար: Հետևաբար, պետք է ենթադրել, որ մեր նպատակներին չեն կարող ծառայել այն «դեղատոմսերը», որոնք ժամանակակից տնտեսագիտությունը կիրառում է՝ իր հասկացած ճգնաժամերը հաղթահարելու համար:

Ի դեպ, Հայաստանում կիրառվել է այդ «դեղամիջոցների» ամբողջ պաշարը: Մասնավորապես՝ դրանց շնորհիվ երկու տարում կայունացավ դրամի փոխարժեքը, և այսօր սպառողական բազմաթիվ ապրանքներ դրամով արտահայտված կայուն գներ ունեն: Սակայն պարզ է, որ նման բուժման արդյունքները մեզ բոլորովին էլ չեն գոհացնում: Օրինակ, գործազրկությունը խթանող դեղամիջոց է պետական ծախսերի ավելացումը: Տարիներ շարունակ մեր բյուջեում ծախսերը գերազանցել են եկամուտներին: Սակայն դրա հետևանքով գործազրկությունը կրճատվել է աննշան չափով, փոխարենը՝ ահռելի չափերի է հասել արտաքին պարտքը: Այսինքն՝ ունքը շինելու փոխարեն աչքն էլ են հանել:

Ինչո՞ւ է այդպես: Ո՞րն է մեր ճգնաժամի առանձնահատկությունը: Ինչո՞ւ այս դեպքում տնտեսագիտական միտքն ունակ չէ լուծումներ առաջարկել: Բանն այն է, որ թեև այսօր Հայաստանում շուկայական իմաստով հավասարակշռություն կա, սակայն ԽՍՀՄ լուծարման օրերին նույն այդ հավասարակշռությունը խախտվել էր, այն էլ շատ կտրուկ: Դրանից հետո **նոր հավասարակշռությունը, փաստորեն, կայացավ արտադրության ծավալների ոչ թե նախկին, այլ նոր, անչափ ցածր մակարդակի վրա: Բայց եթե Ռուսաստանում, օրինակ, այն միայն մի քանի տոկոսով էր ցածր նախկին մակարդակից, ապա Հայաստանում՝ բազմապատիկ անգամներով: Սա պետք է լավ պատկերացնել, այլապես մասնագիտական և քաղաքական դատողությունները շատ պարզունակ կլինեն:**

Խորհրդային միասնական տնտեսության փլուզումը ծանր հարված հասցրեց նրա անկախացած բեկորներին: Նախկին հանրապետությունների միջև տասնամյակների ընթացքում ձևավորված տնտեսական կապերը մի ակնթարթում ի չիք դարձան, անիշխանության պայմաններում փոշիացվեց ազգային հարստությունը: Այս ամենը մի քանի անգամ կրճատեց երկրների արտադրելու ունակությունը: Հայաստանի դեպքում դրան գումարվեցին ոչ միայն աղետի գոտին ու պատերազմը, այլև աշխարհագրական փակուղային դիրքի առանձնահատկությունը: Աղետի գոտու և պատերազմի հետևանքները հետզհետե վերացան, սակայն աշխարհագրական դիրքի և հաղորդակցությունների բացակայության պատճառով միջազգային առևտրին մասնակցելու Հայաստանի հնարավորություններն էապես ավելի սահմանափակ են, եթե չասենք, որ ընդհանրապես դուրս ենք մնացել աշխատանքի միջազգային բաժանմանը մասնակցելու հնարավորությունից:

Արդյունքում՝ 1991թ.-ին պատվերների, հումքի, էներգիայի բացակայության պատճառով Հայաստանի տնտեսության արտադրելու ունակությունը կրճատվեց մոտ 11 անգամ: Քանի որ այդ կրճատումն ակնթարթային չէր, այսինքն՝ հույս չկար, որ առաջիկայում գործարանները կվերագործարկվեին, հաստոցները և արտադրական տարածքները վաճառվեցին: Մի քանի ամսում Հայաստանը կորցրեց իր արդյունաբերությունը: Անգամ օդային ռմբակոծությունները չէին կարող այսչափ վնասել մեր տնտեսությանը, որքան վնասեց ԽՍՀՄ փլուզումը:

Այստեղ, իհարկե, աչքի է զարնում թալանողների հանգամանքը: Նման հանցագործությունները, հատկապես այդ օրերին, համարժեք են ազգային դավաճանությանը: Սակայն պետք է գիտակցենք, որ եթե անգամ ազգային հարստությունը չթալանվեր, այն հիմնականում կամ վաճառվելու էր պետության կողմից, կամ վերածվելու էր մետաղի ջարդոնի և անպիտան շենքերի հավաքածուի: Համենայն դեպս, **նախկինում բազմահազարանոց աշխատողներ ունեցող մեքենաշինական կամ քիմիական գործարանների անգործության մատնվելն անխուսափելի էր: Թալանչիները ճգնաժամ չառաջացրին, այլ միայն խորացրին այն:**

Տնտեսության արտադրելու կարողության կամ շուկային ապրանք առաջարկելու ունակության կորուստը հանգեցնում է մի վիճակի, երբ միաժամանակ աճում են և գները, և գործազրկությունը: Դա հազվադեպ է տեղի ունենում և, որպես կանոն, պատերազմների, աղետների և այլ փլուզումների հետևանք է: Ընդ որում, երևույթի չափերը Հայաստանում շատ մեծ էին: Նման դեպքերում տնտեսագիտությունն անզոր է: Մակրոտնտեսական մեթոդներով կարելի է կարգավորել շուկայական պահանջարկը, բայց ոչ առաջարկը: Կարելի է թույլ չտալ, որ պահանջարկի աճի պատճառով դրամի արժեզրկում լինի, կամ դրա նվազման պատճառով ավելանա գործազրկությունը, բայց այդ միջոցներով հնարավոր չէ միաժամանակ պայքարել և արժեզրկման, և գործազրկության դեմ, որովհետև դրանք տարբեր, միմյանց հակացուցված դեղեր են պահանջում: Այսինքն՝ եթե սանձում ես գների աճը, ապա ավելանում է գործազուրկների բանակը, իսկ եթե նրանց թեկուզ մի մասին ապահովում ես աշխատանքով, ապա գները նորից աճում են:

Համեմատության համար ասենք, որ երբ 1978-80թթ. ԱՄՆ-ում նավթի միջազգային գների աճի պատճառով կրճատվեց շուկայական առաջարկը, և միաժամանակ արձանագրվեց և գործազրկության, և գների աճ, նախագահ Ռեյգանը հարցը լուծեց ոչ թե տնտեսագիտական, այլ ռազմաքաղաքական մեթոդներով: Նա պարզապես նավատորմ ուղարկեց Մերձավոր Արևելք և սպառնալով ստիպեց նավթ արտահանող երկրներին իջեցնել գները: Բայց եթե ԱՄՆ-ում խոսքը գործազրկության և գնաճի միայն մի քանի տոկոսի մասին էր, ապա Հայաստանում, արդեն ասացինք, արտադրությունը կրճատվել էր 11 անգամ, իսկ գները տարվա ընթացքում կրկնապատկվում կամ եռապատկվում էին:

Հայաստանում ամերիկյան մեթոդներով գործելու հնարավորու-

թյուն չկար, տնտեսագետներն անզոր էին, և ամեն ինչ ինքնահոսի մատնվեց: Ավելին, ազատականացումը և շուկան հռչակվեցին որպես փրկության միջոց, որի հետևանքը եղավ ոչ միայն թալանը, այլև սպառողների և նոր տնտեսվարողների իրավիճակն ավելի սրող վարքագիծը:

Եթե հանրագումարի բերենք կատարվածը, պիտի ասենք, որ պետությունը և ժողովուրդն ունեին և այսօր էլ տակավին ունեն երկու ընտրություն: Նախ՝ մենք պիտի ընտրեինք աղքատության և արտագաղթի միջև: Այսինքն՝ կամ պիտի աշխատողների տասից մեկը մնար երկրում, կամ պիտի տասն անգամ աղքատանայինք: Մենք ընտրեցինք միջանկյալ տարբերակը, որի հետևանքով գործունյա բնակչության մոտ երկու երրորդն արտագաղթեց, և մենք, մյուս հետխորհրդային երկրների համեմատ, աշխատում ենք մոտ երեք անգամ թերբեռնված և նույնքան էլ աղքատ ենք ապրում:

Երկրորդ ընտրությունն ավելի շատ իշխանությունները պիտի կատարեին: Կամ նրանք պետք է խնդիրների լուծումը վստահեին շուկայի բնական մեխանիզմներին՝ դրանց համար ազատ գործելու պայմաններ ստեղծելով, կամ պետությունը պետք է խիստ սահմանափակումներ կիրառեր շուկայի և նրա մասնակիցների նկատմամբ, հավաքագրեր եղած ռեսուրսները և նպատակաուղղված արմատական քայլերով փորձեր վերականգնել արտադրության ծավալները: Հայաստանի իշխանությունները, ելնելով իրենց շահերից, ինչպես նաև արտաքին թելադրանքով, ընտրեցին առաջինը՝ շուկայական-ազատական ուղին:

Դժվարին ընտրությունը դեռ շարունակվում է: Մենք այսօր էլ ամեն օր ընտրում ենք աղքատության և արտագաղթի միջև: Դա անում է ոչ միայն կառավարությունը, այլև՝ ժողովուրդը, յուրաքանչյուրս: Այսօր էլ քաղաքական ուժերը՝ նախկին, ներկա և ապագա իշխանավորները, խոսում են միայն շուկայական տնտեսության հնարավորությունների մասին՝ բացառելով արմատական միջամտության ուղին: Իսկ գիտակցո՞ւմ են արդյոք նրանք, որ իրենց այդ ընտրությամբ հարցականի տակ են դնում հայության ապագան:

Աղքատության և արտագաղթի միջև ընտրությունն ունի նաև հակադարձ ձևակերպում: Չարիքների փոքրագույնն ընտրելու փոխարեն ավելի լավ է կողմնորոշվել, թե ինչն է մեզ համար ավելի կարևոր՝ բարեկեցությո՞ւնը, թե՞ հայրենիքը: Այս հարցադրումը տեղին է ինչպես յուրաքանչյուրի անհատական, այնպես էլ համազգային ընտրության դեպքում:

Բազմաթիվ ընտանիքներ, ծայրահեղ կարիքից դըրդված, բռնում են արտագաղթի ճամփան, բայց պահպանում են վերադարձի հույսը: Սակայն կան նաև հազարավոր ընտանիքներ, որոնց համար նյութական, թվացյալ բարեկեցությունը հայրենիքից շատ ավելի կարևոր է: Սրանք բոլորովին էլ կարիքավորներ չեն և նույնիսկ մյուսների համեմատ շատ ավելի ապահովված են, սակայն ձգտում են ավելիին և հաճախ հասնում են նրան, ինչին ձգտում են, և, բնականաբար, կորցնում են հայրենիքը, որը, հավանաբար, չունեին էլ իրենց հոգում:

Նույնն է նաև համազգային ընտրության պարագայում: Հայաստանում այսօր ծնվում է մոտ 3 անգամ ավելի քիչ երեխա, քան կարող էր ծնվել, եթե չլիներ արտագաղթը: Բոլորը համամիտ են, որ սա ազգային սպառնալիք է: **Բայց արդյո՞ք բոլորն են համաձայն գոտիները պինդ ձգել, որպեսզի երկիրը վերականգնի իր մարդկային ներուժը, որպեսզի առաջիկայում Հայաստանում տարեկան հարյուր հազար երեխա ծնվի:** Այլ կերպ ասած, այն, ինչ Հայաստանն այսօր տալիս է իր 30-35 հազար մանուկներին, վաղը կկարողանա՞ արդյոք բաժանել 100 հազարի միջև: Այն, ինչ այսօր սպառում ենք անտեղի և վատնում հաճույքների վրա, կուզենա՞նք արդյոք խնայել ապագա սերունդների համար: Հենց այս երկընտրանքն է տնտեսական խնդրի արդի ձևակերպումը: **Կամ մենք հայ բնակչությանը հայրենիքում պահելու նպատակ ունենք, կամ միայն այստեղ մնացած մասին մի քիչ ավելի հարուստ կյանք ապահովելու խնդիրն ենք փորձում լուծել:**

Սա բնավ տնտեսագետների մասնագիտական հարցը չէ, այլ՝ ազգային - պետական կարևոր ընտրություն: **Եթե ազգային որոշում կայացվի այն մասին, որ երկրի տնտեսական քաղաքականության նպատակը հայ բնակչության թիվը Հայաստանում բազմապատկելն է, ապա այդ նպատակին հասնելու համար մասնագիտական առաջարկությունների պակաս չի զգացվի:** Բայց եթե, առանց նպատակը հստակորեն սահմանելու, որոշում կայացնելու պարտականությունը թողնվի տնտեսագետներին, ապա լավագույն դեպքում կունենանք այն, ինչն ունենք այսօր: Զուտ տնտեսագիտական միտքը ենթակա է մասնագիտական կարծրատիպերի, և եթե նրան այլ, տվյալ դեպքում՝ բնակչության թիվը բազմապատկելու գերնպատակ չպարտադրվի, ապա մասնագետները շարունակելու են ղեկավարվել շուկայական տրամաբանությամբ: Մեր դեպքում այդ տրամաբանությունը հանգեցնում է նրան, որ Հայաստանը շատ նեղ է երեք միլիոն բնակչի համար: Մի խոսքով, աղքատությունը, գործազրկությունը և արտագաղթը տնտեսագիտական խնդիրներ չեն, ընդհանրապես մասնագիտական չեն, այլ համազգային են և քաղաքական: **Եթե հանուն ազգային անվտանգության իսկապես անհրաժեշտ է գոտիներ ձգել, ապա դա տնտեսագետների որոշելիքը չէ, այլ բոլորիս գործն է:**

Այդ որոշումն իսկապես դժվար է կայացնել, որովհետև երբ խոսքը գոտիները ձգելու մասին է, առանց այդ էլ նյութական ծանր վիճակում գտնվողները ընդվզում են: Դա միանգամայն հասկանալի է. կիսաքաղց մարդիկ դժվար թե գոտիներն ավելի ձգելու տեղ ունենան: Ակնհայտ է, որ այս դեպքում խոսքը նրանց մասին չէ և առաջին հերթին վերաբերում է ջիփերի և դղյակների տերերին: Սակայն սրանք էլ դժվար թե կամավոր մասնակցեն խնայելու համազգային որոշմանը, և դա այն պարզ պատճառով, որ այդպիսի որոշումը բոլորից շատ իրենց է վերաբերելու: Բնական է, որ ներկայիս տնտեսական վերնախավին այն կարող է միայն պարտադրվել: Ընդ որում, այդ պարտադրանքն անհրաժեշտ քանի որ է. անհնար է, որ մարդիկ համաձայնեն գոտիներ ձգել այն ժամանակ, երբ ուրիշները շռայլում են, իսկ երկրում ապահովված չէ բացարձակ արդարության և հավասարության մթնոլորտ:

Փաստորեն, գոտիները ձգելու մասին որոշում կայացնելու պատասխանատվությունը ընկած է առավելապես միջին եկամուտների տեր մարդկանց ուսերին: Դրա հետևանքները նրանց համար կարող են տարատեսակ դրսևորումներ ունենալ: Այսպես, եթե մասնագետները որպես լուծում առաջարկեն, որ Հայաստանն այլևս

չպետք է ներմուծի ավելին, քան կարող է արտահանել, իսկ այդ սահմանափակ ծավալներով ներմուծածի մեջ ավելի մեծ տեսակարար կշիռ պետք է ունենան արտադրության միջոցները և հումքը, այլ ոչ թե սպառողական ապրանքները, ապա դրա արդյունքում կսահմանափակվի, օրինակ, կենցաղային սարքերի ներմուծումը, որոնց գլխավոր սպառողը հենց միջին խավն է: Կամ եթե որոշվի, որ այլևս արտաքին պարտք չպետք է կուտակենք, վարկեր չպետք է վերցնենք, փոխարենը՝ պետք է ավելի բարձր տոկոսով հարկվեն քաղաքացիների եկամուտները, ապա բեռի զգալի մասը դարձյալ կընկնի աշխատող խավի վրա: Հնարավոր է՝ անհրաժեշտ համարվի որոշ չափով սահմանափակել տնտեսվարելու ազատությունը: Դա նույնպես մեծամասամբ կվերաբերի միջին խավին, մասնավորապես՝ փոքր ձեռներեցներին:

Իրավիճակը կարող է բարդանալ միջազգային արձագանքի պատճառով: Համաշխարհային բանկը, Արժույթի հիմնադրամը, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը և միջազգային մյուս կառույցները, ամենայն հավանականությամբ, կդատապարտեն Հայաստանին՝ իրենց առաջարկած-պարտադրած ուղուց հեռանալու, ներքին և միջազգային առևտուրը սահմանափակելու, շուկայի գործերին միջամտելու համար, կդադարեցնեն ամեն տեսակ ֆինանսական օժանդակությունը, կպահանջեն մարել նախկինում կուտակված արտաքին պարտքը, և բացառված չէ, որ կիրառեն նաև որոշ պատժամիջոցներ: Թեև ընդհանուր առմամբ, հատկապես հեռանկարային իմաստով այս ամենը Հայաստանին միայն օգուտ կբերի, սակայն սկզբնական շրջանում կարող են առաջանալ լուրջ դժվարություններ, որոնք հնարավոր չի լինի հաղթահարել առանց ժողովրդական ըմբռնման և աջակցության:

Հոգեբանորեն դժվար է համակերպվել ձեռներեցական որոշ ազատությունների սահմանափակման հետ: Սակայն մյուս կողմից պետք է հասկանալ, որ եթե ազատ ձեռներեցները, իրենց շահույթը հետապնդելով, ազգային անվտանգությանը հակառակ նպատակի են ծառայում, եթե Հայաստանում արտադրելու փոխարեն ներմուծում են, եթե արտադրամիջոցի փոխարեն ծամոն են ներմուծում, եթե ներդրումների համար չափազանց անհրաժեշտ միջոցները երկրից դուրս են հոսում, եթե դպրոցի և արտադրամասի փոխարեն կազինո է կառուցվում, եթե սահմանամերձ շրջանների փոխարեն Երևանի կենտրոնն է կառուցապատվում, ուրեմն՝ **այդպիսի ձեռներեցական ազատությունը չի կարող շենացնել Հայաստանը, որքան էլ ձևականորեն տնտեսական աճ ապահովի:**

Անհրաժեշտ է, որ մարդիկ լավ պատկերացնեն այս և հավանական այլ հետևանքները, նժարի մյուս կողմում դնեն իրենց ազգային պատասխանատվությունը և գիտակցեն այն գինը, որ այսօր պարտավոր են վճարել հանուն այն նպատակի, որ վաղը հայությունն իր բնօրրանում ունենա բավարար թվաքանակ, կարողանա տեր կանգնել իր իրավունքներին, անվտանգ զարգանալ, հարատևել ու արարել՝ հավատարիմ մնալով սեփական հոգևոր արժեքներին և մշակույթին:

ՃԱՆԱՉԵՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

ՈՐՏԵՂ Է ՆԵՐՔԻՆ ՋԱՎԱԽՔԸ

Մեր օրերում, սովորաբար, երբ խոսվում է Ջավախքի մասին, այդ տեղանվանման տակ հասկացվում է հայաբնակ այն տարածքը, որը 1918-21 թվականներին նորակազմ Վրաստանը զավթել է Հայաստանից, այսինքն՝ նախկին Ախալքալաքի գավառը: Կովկասյան փոխարքայության կազմում 1874 թվականին ստեղծված Ախալքալաքի գավառը նախքան այդ մտնում էր Ախալցխայի գավառի կազմի մեջ և Ռուսական կայսրությանն էր անցել 1828-29 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Խորհրդային տարիներին Ախալքալաքի գավառը բաժանվել է երեք մասի՝ Ախալքալաքի ու Բոգդանովկայի (Նինոծմինդայի) շրջանների և մասամբ Ասպինձայի շրջանի: Ախալքալաքի և Ախալցխայի գավառների սահմանը մինչև 1918թ. անցնում էր հիմնականում Կուր գետով: Ախալքալաքի գավառի տարածքը շրջափակված է գլխավորապես լեռներով և հնում ոչ թե Ջավախք, այլ Վերին Ջավախք անունն է ունեցել:

Ուսումնասիրողները, հիմք ընդունելով այս անվանումը, իրավացիորեն գտնում են, որ եղել է նաև Ներքին Ջավախք: Բայց Ներքին Ջավախքի մասին չունենալով հստակ տեղեկություններ՝ այն տեղադրում են սխալ կերպով՝ ենթադրելով, որ Ներքին Ջավախքը կազմել է ներկայիս Ասպինձայի շրջանն ու Արդահանի մի մասը: Իրականում, գրեթե նույն բարձրություն ունեցող տարածքը ներքին անվանելու մեջ որևէ տրամաբանություն չկա: Ջավախքի բարձրությունը մոտ 1800 մետր է, և շրջակա տարածքներից ոչ Արդահանը, ոչ Աշոցքը, ոչ էլ, մանավանդ, այն շրջապատող լեռնաշղթաները նրանից ցածր չեն: Միակ տարածքը, որը շուրջ 600 մետրով ցածր է Ջավախքի սարահարթից, նախկին Ախալցխայի գավառն է: Հայ գիտնականները խորհրդային



Ախալքալաք, սբ. Խաչ եկեղեցին

շրջանում պարզապես վախեցել են ասել ճշմարտությունը, որովհետև նման հանդգնության համար ազգայնամոլ էին համարվելու:

Իհարկե, միայն բարձրությունը չէ, որ հիմք է տալիս նախկին Ախալցխայի գավառը, որը ներառել է նաև Ադիգենի շրջանը և Ասպինձայի մի մասը, տեղորոշել որպես Ներքին Ջավախքի տարածք, իսկ Սամցխե անունը համարել շատ ուշ ժամանակներում այդ տարածքին տրված անուն: Ասվածը հիմնավորվում է առաջին հերթին բնաշխարհագրական տվյալներով:

Ինչպես հայտնի է, 19-րդ դարի վերջին եվրոպացի գիտնականներ է. Զյուսը և Կ. Ռիտտերն Անատոլիական և Իրանական բարձրավանդակների, Կուր և Ռիոն գետերի, ինչպես նաև Միջագետքի արանքում ընկած տարածաշրջանն անվանեցին «լեռնային կղզի»: 315 հազ. քառ. կմ տարածք ունեցող լեռնային այդ «կղզին» բոլոր առումներով պատմական Հայաստանի բուն միջուկն է կազմում: Մեծ Հայքի տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից 1870 մետր է, և այդ միջինը 600-800 մետրով ավելի բարձր է, քան շրջակա երկրները:

«Աշխարհագրությունն է որոշում պատմությունը». աշխարհաքաղաքական արդի գիտության հանրահայտ այս ասույթը, ճիշտ է, անծանոթ էր մեզնից շուրջ 3 հազարամյակ առաջ Վանի թագավորությունը կերտող արքաներին, բայց հենց նրանք առաջինը գիտակցեցին Հայկական ողջ բարձրավանդակի լեռնաշղթաները վերահսկելու միջոցով կենսունակ պետություն ստեղծելու անհրաժեշտությունը:

Մեծ պատմաբան Լեոն Լոռիի, Ախալքալաքի և Ղարաբաղի սահմանավեճերին վերաբերող իր գրքում գրել է. «Իբրև անկախ պետություն՝ Հայաստանը կարող էր կայուն և ուժեղ լինել միայն այն դեպքում, երբ կամփոփեր իր մեջ Հայկական բարձրավանդակն ամբողջությամբ, այսինքն՝ նրա այն սահմաններով, որ ստացել է այդ սարահարթը կամ «լեռնակղզին» բնությունից: Այս պետական անհրաժեշտությունը հայերից առաջ ըմբռնել էին ուրարտացիները, որոնք և ուժեղ շարժումներով մոտենում էին Հայկական բարձրավանդակի եզրագծերին, այն է՝ հյուսիսում՝ Փոքր Կովկասի շղթային և հարավում՝ Տավրոսի շղթային: Ճիշտ այս ուղղություններով էլ Արտաշես և Տիգրան թագավորները տարան հայոց ազգային շարժումները»:

«Հայոց ազգային շարժումները», որոնք այլ բան չէին, քան հենց Հայոց պատմությունը, միշտ էլ հավատարիմ մնացին Արգիշտիների ու Արտաշեսների նախանշած ուղիներին: Բերենք միայն մեկ օրինակ: Արշակ Բ-ի օրոք (350-368թթ.) Գուգարքի բդեշխն ապստամբում է և հարում Վրաստանի տերերին: Արշակի որդի Պապ արքայի հրամանով Մուշեղ սպարապետը պարտության է մատնում բդեշխին ու վերստին հասնում հայ-վրացական հին սահմանին՝ Կուր գետը. «Զհին սահմանան, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ յերկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր»,- գրել է Փավստոս Բյուզանդը:

Այն մասին, որ Հայաստանի սահմանը Կուր գետն է եղել, բազմաթիվ տեղեկություններ են թողել հունահռոմեական աշխարհագետները (Ստրաբոն, Պլինիուս Ավագ, Կլավդիոս Պտղոմեոս, Պլուտարքոս, Դիոն Կասիուս): Վրացի «գիտնականներն» ավելի քան 100 տարի է, անտեսելով պատմական վստահելի աղբյուրների կողմից հստակ ու պարզ ավանդված ճշմարտությունները, հետին թվով հորինել են մի «աշխարհագրություն», ըստ որի՝ երբեմնի ամբողջ Գուգարքը, Կղարջքը և Տայքը հին վրացական հողեր են: Նրանք կեղծիքի են դիմում միայն մեկ նպատակով՝ հավերժացնել 1918-21թթ.-ին Հայատանից խլված տարածքների բռնազավթումը, որը հնարավոր էր դարձել Հայաստանի վրա Օսմանյան կայսրության հարձակման հետևանքով: Թիֆլիսից մինչև Սադախլո և Ջեքարի լեռնանցքից մինչև Աշոցքի սահման ընկած շուրջ 20 հազ. քառ. կմ տարածքում վրացիների թիվը չէր հասնում անգամ բնակչության ընդհանուր թվի 5 տոկոսին: Ի դեպ, այսօր էլ Կուրից ներքև ընկած շրջաններում վրացիների թիվը, իրենց իսկ պաշտոնական տվյալներով, կազմում է մոտ 10-15 տոկոս:

Հայտնի է, որ Կուր գետը եղել է ոչ միայն Վիրքից, այլև նրանից արևելք ընկած պատմական Աղվանքից Հայաստանը բաժանող սահմանը: Առնվազն 2000 տարի Կուրն իր գետաբերանից մինչև այսպես կոչված Փոքր Կովկասից դուրս գալու վայրը սահմանային գետի դեր է խաղացել: Այստեղ, սակայն, նախ՝ հարց է ծագում, թե ո՞րն է այն վայրը, ուր վերջանում է Փոքր Կովկասը, և երկրորդը՝ ինչո՞ւ հենց այդ վայրից է Կուրը սահմանային գետի դեր խաղացել:

Կուր գետի ակունքները Հայաստանում են: Սա ոչ ոք չի ժխտում: Սկսվելով Կող գավառից՝ նա հատում է Արդահանի գոգավորությունը և մտնում Ջավախքի լավային սարահարթի մեջ՝ առաջացնելով խոր խնձահովիտ (կանիոն): Ախալցխայի գոգավորությունից Կուրը մտնում է Բորժոմի կիրճ:


Կումուրդո, սբ. Համբարձման եկեղեցին

Սկսած այն կետից, ուր վերջանում է Բորժոմի կիրճը, Կուրը դառնում է բաժանարար գիծ Հայկական բարձրավանդակի ու Կովկասյան տարածաշրջանի միջև: Բանն այն է, որ Սև ծովի արևելքից սկսվող Աջարա-Իմերեթյան լեռները հասնում են մինչև Բորժոմի կիրճ, իսկ արդեն Կուրի աջ ափից սկսվում են Թռեղքի լեռները: Աջարա-Իմերեթյան և Թռեղքի լեռները Հայկական լեռնաշխարհի պատի մի մասն են կազմում, ուստի այդ պատը ճեղքելուց հետո Կուրը դուրս է գալիս լեռնաշխարհից և անմիջապես թեքվելով հարավ-արևելք՝ հոսում է Թռեղքի, Գուգարաց և Արցախյան լեռնշղթաների փեշերով:

Աջարա-Իմերեթյան լեռնաշղթան հյուսիս-արևելքում միանում է Լյախի կամ Սուրամի լեռնաշղթային, որը Վրաստանը բաժանում է արևմտյան և արևելյան մասերի: Հնում արևմուտքում Կոլխիդան էր, իսկ արևելքում՝ Իբերիան (Քարթլին): Իսկ ներկայիս Սաքարթվելո անունը միայն 2-3 հարյուր տարվա պատմություն ունի:

Աշխարհագրական-բնական այս իրողությունները հաստատվում են նաև գրավոր աղբյուրներով: Կլավդիոս Պտղոմեոսն իր «Աշխարհագրություն»-ում գրել է. «Մեծ Հայքը հյուսիսում սահմանազատվում է Կոլխիդայի մի մասով, Իբերիայով և Աղվանքով, վերը նշված Կուր գետով անցնող գծով»:

Նույն այս միտքը, բայց ավելի ճշգրիտ ու հստակ, գտնում ենք Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ում: Այնտեղ Կողքիսի (Կոլխիդայի) մասին գրված է. «Արևմուտքից սահմանն անցնում է Դռական գետով մինչև Կովկասյան լեռները, դեպի նրա այն լեռնաբազուկը, որը բաժանում է Կողքիսը Վիրքից: Այստեղ Կողքիսը մասամբ սահմանակից է Մեծ Հայքին»: Կողքիսն ու Վիրքը բաժանող լեռնաբազուկը Սուրամի կամ Լյախի լեռնաշղթան է, որը, սկսելով Մեծ Կովկասից, իջնում է գրեթե մինչև Կուր գետ և Մոսխական լեռների հյուսիսային մասը:

Այսպիսով, եթե Հայաստանի ու Վիրքի սահմանը Կուրն է, իսկ Վիրքի ու Կոլխիդայի սահմանը Լյախի լեռները, ուրեմն՝ Կոլխիդայի և Հայաստանի սահմանն էլ կլինի Աջարա-Իմերեթյան լեռների ջրբաժան գիծը, որը Ախալցխայի (Սամցխեի) գավառը շրջափակում է հյուսիս-արևմուտքից և Վիրքի հետ շփման որևէ կետ չի թողնում: Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև նշված գավառը Հայկական լեռնաշխարհի ներսում համեմատաբար ինքնուրույն բնաշխարհագրական մեկ միավորի՝ Ջաբախա-Ջավախքի մի մասն է: Թե երբ է այդ տարածաշրջանը Սամցխե վերանվանվել, դժվար է որոշել, բայց որ այդ անվանումը Մոսխական լեռների և ոչ թե ինչ-որ ցեղի անվան հետ է կապվում, դրանում ևս չպետք է տարակուսել:

Այն, որ Ներքին Ջավախքը Կուրից հյուսիս-արևմուտք ընկած տարածքն է, որից միայն երեք անցք է տանում դեպի այլ՝ օտար ուղղություններ՝ Ջեքարի, Խուլոյի լեռնանցքները և Կուրի Բորժոմի կիրճը, ապացուցվում է նաև այլ փաստերով: Հայտնի է, օրինակ, որ Գուգարքի բդեշխության 4600 զինվորների թվում, որոնք պատերազմի ժամանակ դրվում էին հայոց արքայի տրամադրության տակ, 200 զինվորը տրամադրում էին Ջավախքի տերերը՝ Վարձավունի իշխանները, որոնք 72 նախարարական տների մեջ 27-րդն էին: 200 զինվոր ունենալն այն դարերում քիչ բան չէր: Այժմ էլ, ունենալով 200 արհեստավարժ զինվոր, կարելի է պաշտպանել Ջեքարի, Խուլոյի և Բորժոմի անցքերը: Բացի այդ, Վարձավունիների իշխանանիստը Վարձավն էր (հետագայի աղավաղված Վարձիան), որն իշխում էր Փարվանա գետը Կուրը թափվելու ռազմավարական հանգույցի վրա և ամենևին չէր կարող նախարարության տարածքի եզրին լինել: Իրոք, Վարձավն աշխարհագրական-ռազմապաշտպանական առումներով ընկած է գավառի գրեթե կենտրոնում, և այդտեղից կարելի է վերահսկել թե՛ Վերին և թե՛ Ներքին Ջավախքի սահմանները: Եվ վերջապես ժողովրդագրական առումով բազմաթիվ հիշատակումներ կան հենց Ներքին Ջավախքում մեծ թվով հայ բնակչության ջարդերի ու գերեվարությունների մասին, մինչդեռ վրացիների վերաբերյալ նման տվյալներ չկան:

Ինչ վերաբերում է նյութական մշակույթին, ապա ողջ Ջավախքում վրացական ո՛չ հեթանոսական և ո՛չ էլ քրիստոնեական շրջանի համավրացական կամ թեկուզ շրջանային մակարդակի ոչ մի կենտրոնի մասին հիշատակություններ չկան, հայկական մշակութային շերտն անառարկելիորեն միակն է:

Ամփոփենք. ներկայիս Վրաստանի «Սամցխե - Ջավախեթի» նահանգը, կազմելով Հայկական լեռնաշխարհի մի մասը, ի սկզբանե եղել է Հայաստանի կազմում Ջավախք անունով՝ որպես կարևոր ռազմապաշտպանական


Գանձա,
սբ. Կարապետ եկեղեցին

գավառ: Այն բաժանված է եղել Ներքին և Վերին Ջավախքների, Վիրքի հետ սահման չի ունեցել, իսկ Կոլխիդայից բաժանված է եղել Աջարա-Իմերեթյան լեռներով, որտեղ միայն Ջեքարի լեռնանցքն է անցնելու հնարավորություն տալիս: Խուլոյի (Գոդերձականի) լեռնանցքով գավառը կապված է Ճորոխի ավազանի հետ, իսկ Հայաստանի մնացած գավառների հետ այն կապված է եղել բազմաթիվ ճանապարհներով: Ժողովրդագրական առումով այն միշտ եղել է հայահոծ, իսկ քաղաքական առումով՝ հայկական պետության կազմում, կամ բազմիցս նվաճվել է օտարների կողմից (ինչպես է այժմ) և ենթարկվել աղետների:

Ժ.Մ.

ՋԱՎԱԽՔ

ԹՌԵՂՔՈՒՄ ԳԱՐՈՒՆԸ ԲԱԺՎԵԾ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՄԲ

Մարտի 9-ի երեկոյան Ծալկայում մի խումբ սվաններ դարանակալ հարձակվել են հայ երիտասարդների վրա: Նրանց դանակների հարվածներից սպանվել էր Ղուշչի գյուղի 23-ամյա բնակիչ Գևորգ Գևորգյանը: Երկու հայ երիտասարդներ էլ ծանր վիրավորվել էին և տեղափոխվել Թբիլիսիի հիվանդանոցներից մեկը: Հաջորդ առավոտյան շրջկենտրոնի հրապարակում հավաքված սգավոր և բողոքող հայության դեմ դուրս էին եկել վրացական քրեական ոստիկանության հատուկջոկատայինները և շատ կոպտորեն, մահակներով ու սպառնալիքներով ցրել էին հավաքվածներին:

Ծալկայի (Ծաղկայի) շրջանը Գուգարքի Թռեղք գավառն է, որը գերազանցապես հայաբնակ է: Նախկինում այդտեղ բնակվում էին նաև որոշ թվով հույներ, որոնք, սակայն, վերջին տարիներին արտագաղթել են: Վրացական իշխանություններն այս շրջանում վերաբնակեցնում են մեծ թվով աջարների և սվանների, որոնք իբրև թե տուժել են իրենց նախկին բնակության վայրերում պատահած բնական աղետներից: Բնակչության ազգային կազմի փոփոխությանը զուգահեռ ավելանում է լարվածությունը և հակահայ թշնամանքը:

Վրացական իշխանությունները ձերբակալեցին մի քանի կասկածյալի: Սպանության փաստը նրանք մեկնաբանեցին որպես կենցաղային հողի վրա տեղի ունեցած հանցագործություն, թեև տուժողները հանցագործների հետ նախկինում որևէ կերպ չեն առնչվել:

Վրաստանում Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդարանը ներկայացրել է իր դիրքորոշումը՝ նշելով, որ Վրաստանում նման հանցագործությունները երկրի հայ բնակչության և առաջնորդարանի դեմ զանգվածային լրատվամիջոցներով հակահայ հիստերիայի տրամաբանական հետևանքն են:

Մարտի 11-ին Ախալքալաքում տեղի ունեցավ բազմամարդ հանրահավաք, որի մասնակիցները խստորեն դատապարտեցին Ծալկայում կատարված հանցագործությունը և դրան հաջորդած ոստիկանների հակահայ գործողությունները: Հանրահավաքի մասնակիցները Վրաստանի իշխանություններին հայտարարություն են ուղղել: Նրանում մասնավորապես կոչ է արվել դադարեցնել ազգամիջյան լարվածության միջոցով ճնշում գործադրելու քաղաքականությունը և այլազգիներին հայաբնակ շրջաններում բնակեցնելը, երաշխավորել հայության իրական անվտանգությունը և այլն: Միևնույն ժամանակ հանրահավաքի մասնակիցները Վրաստանի հայությանը կոչ են արել լինել զուսպ, զգույշ և համախմբված, չենթարկվել սադրանքների: Հետո նրանք երթով շարժվել են դեպի շրջանային դատարան և պահանջել են վերականգնել իրենց աշխատատեղերում հայ դատավորներին, որոնց ազատել են աշխատանքից դատերը հայերեն վարելու պատճառաբանությամբ: Ի նշան բողոքի՝ հանրահավաքի մասնակիցները կոտրել են դատարանի, ինչպես նաև Թբիլիսիի պետական համալսարանի Ախալքալաքի մասնաճյուղի շենքերի ապակիները: Համալսարանի շենքի ապակիները կոտրել են այն պատճառով, որ այնտեղ սովորելու հնարավորություն հայերը չունեն, իսկ նրանց փոխարեն համալսարան են ընդունվում տարբեր շրջաններից ժամանող վրացիները: Երթի մասնակիցները նաև «խուզարկել են» վրացական նորակառույց մատուռը՝ ակնարկելով վրաց եկեղեցու սպասավորների զինված լինելու հանգամանքը: Ի տարբերություն Ծալկայի, Ախալքալաքում վրացական ոստիկանական ուժերը չեն համարձակվել որևէ պատժիչ գործողություն իրականացնել: Հաջորդ օրն Ախալքալաքում սովորող վրաց ուսանողներին հանձնարարվել է պատասխան բողոքի ցույց կազմակերպել, բայց նրանց փորձը ձախողվել է:

«ՋԱՎԱԽՔ» ԽՈՐՀՈՒՐԴԸ ՓԱՍՏԱԾԻ ԴԱԴԱՐԵՑՐԵԾ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մի շարք հասարակական կառույցներ և անհատներ միավորող այս խորհուրդը փորձում էր սատարել ջավախքահայությանը, կազմակերպել տնտեսական, մշակութային, քարոզչական-տեղեկատվական և այլ բնույթի օժանդակություն: Իր առաջին հայտարարություններից խորհուրդն իրեն դրսևորեց որպես ջավախքահայության նաև քաղաքական իրավունքների պաշտպան:

Այս հանգամանքը մտահոգիչ էր գործող իշխանությունների համար: Վերջինների ցուցումով անմիջապես ակտիվացան Ջավախքի խնդիրներով իբրև թե զբաղվող խամաճիկ կազմակերպությունները, որոնք հայ-վրացական «եղբայրությանը» նվիրված մի քանի միջոցառում կազմակերպեցին: Դրանցում իր ցինիկ հայտարարություններով աչքի ընկավ Վրաստանի դեսպանը:

Սակայն դա բավարար չէր: Իշխանությունները պետք է բացառեին Ջավախքի խնդրի քաղաքական բաղադրիչի վերաբերյալ որևէ հայտարարություն: Ուստի զարմանալի չէր, որ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները ձեռնամուխ եղան Ջավախք խորհրդը կազմալուծելու և նրա անդամներին վախեցնելու ծրագրին: Առիթը եղավ մարտի 14-ին «Ջավախք» խորհրդի մամլո ասուլիսը, որը նվիրված էր Ծալկայի դեպքերին:

Դրանից հետո ԱԱԾ հրավիրվեցին ասուլիսի մասնակիցներ Հրազդան Մադոյանը, Գագիկ Գինոսյանը, խորհրդի այլ անդամներ: Նրանք մեղադրվում էին միջպետական թշնամանք հրահրելու մեջ և զգուշացվեցին, որ կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե չդադարեցնեն իրենց գործունեությունը: Արդյունքում՝ անդամներից շատերի երկմտանքի պատճառով խորհուրդն այդպես էլ չկարողացավ հանդես գալ «չեկիստների» գործողությունները դատապարտող հայտարարությամբ և անգործության մատնվեց:

Զուգահեռաբար ԱԱԾ էին հրավիրվում նաև այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք նույնպես Ծալկայի դեպքերի կապակցությամբ հանդես էին եկել դատապարտող հայտարարություններով: Իշխանություններն այս առիթն օգտագործեցին՝ նաև «Ազատագրված տարածքների պաշտպանություն» հասարակական նախաձեռնության համակարգող Ժիրայր Սէֆիլյանին «զրույցի» հրավիրելու համար: Այս վերջին փաստի համար հիմք էր հանդիսացել այն ենթադրությունը, թե հատկապես նա է իր գործընկերների հետ քաջալերում Ջավախք խորհրդին:

ԲԱՅՑ ՄԻՆՉ ԱՅԴ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՆԳԵՍ ԵԿԱՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ

«Ջավախք» խորհուրդը եւ հայ մտահոգ հասարակությունը բազմիցս կոչ են արել ՀՀ իշխանություններին՝ պատշաճ ուշադրություն դարձնել Ջավախքի հայության խնդիրներին, մասնավորաբար՝ ճանաչել Ջավախքի հիմնախնդրի քաղաքական բաղադրիչը: Այդ կոչերը մնացել են անպատասխան:

Քաջալերված ՀՀ իշխանությունների բացարձակ անտարբերությունից՝ վրաց շրջանակներն էլ ավելի սանձարձակ են դարձել: Միայն վերջին մեկ ամսում տեղի են ունեցել հակահայկական երեք սադրիչ գործողություններ.

1. Վրաց լեզվի չիմացության պատրվակով Ջավախքում աշխատանքից ազատվել են հայազգի դատավորները.

2. Վրաց եկեղեցին, հերթական ոտնձգությամբ, ՀՀ տարածքում հիմնել է Տաշիր-Ագարակի թեմը, այն դեպքում, երբ այդ տարածքում վրացիներ երբեք չեն ապրել, և Վրաց եկեղեցին երբեք հոտ չի ունեցել և չունի.

3. Ծաղկայում (Ծալկա, պատմական Թռեղք) սպանվել է մեկ հայորդի, կա երկու վիրավոր, իսկ վրացական հատուկ նշանակության ջոկատները բիրտ վերաբերմունք են ցուցաբերել և բռնություն կիրառել իրենց արդար ցասումն արտահայտող սգավորների նկատմամբ:

Չբացառելով հանդերձ երրորդ կողմի, այդ թվում՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի մասնակցությունը հակահայկական այս արարքների հրահրման և գործադրման մեջ, «Ջավախք» խորհուրդը նման արարքների առաջնային պատասխանատու է ճանաչում Վրաստանի իշխանություններին և Վրաց ուղղափառ եկեղեցուն: Պատասխանատվության իրենց բաժինն ունեն նաև ՀՀ իշխանությունները, որոնք ոչինչ չեն արել Ջավախքի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Ընդհակառակը, իրենց կրավորական կեցվածքով վրաց ազգայնամոլներին մղում են առավել ծայրահեղ և ծանր հետևանքներով հղի գործողությունների:

«Ջավախք» խորհուրդը

1. խստորեն դատապարտում է Ջավախքում հակահայկական ծրագրավորված արարքները, հայության նկատմամբ խտրականության դրսեվորումները և ցավակցում է Ծաղկայում սպանված հայորդու հարազատներին,

2. իր անվերապահ զորակցությունն է հայտնում իր հայրենի հողում՝ Ջավախքում ապրող ժողովրդին և վիրահայությանը,

3. պարտավորեցնում է ՀՀ իշխանություններին՝ Վրաստանի իշխանություններից պահանջել հետապնդել հակահայկական արարքների սադրիչներին անհապաղ պատասխանատվության կանչելու և նրանց խստորեն պատժելու հարցը,

4. ՀՀ իշխանություններից պահանջում է Վրաստանի իշխանությունների հետ գործակցաբար անհապաղ մշակել միջոցառումների ծրագիր՝ Ջավախքի տարբեր հարցերը, ներառյալ քաղաքական կողմը, արդարացի լուծելու ուղղությամբ:

«Ջավախք» խորհուրդը վստահեցնում է, որ իր հնարավորությունների սահմաններում կանի ամեն ինչ՝ Ջավախքի հայությանը և վիրահայությանը պաշտպանելու, տարածաշրջանի հայաթափումը թույլ չտալու և հակահայկական սադրանքներին արժանի հակահարված տալու ուղղությամբ:

Երեւան, 14 մարտի 2006 թ.

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԱՍՈՒԼԻՍ

«Ջավախք» խորհրդի՝ Ծալկայի դեպքերի կապակցությամբ ընդունած հայտարարությունը հրապարակվեց մարտի 14-ին տեղի ունեցած մամլո ասուլիսի ընթացքում: Ասուլիսին մասնակցում էին Գագիկ Գինոսյանը և Հրազդան Մադոյանը: Վերջինս խորհրդում ներկայացնում էր «Ազատագրված տարածքների պաշտպանություն» հաս. նախաձեռնությունը: Այս հանգամանքը հիմք էր տվել որոշ լրագրողների մտածել և նույնիսկ գրել («Հայոց Աշխարհ»), որ «Ջավախք» խորհուրդը այդ հաս. նախաձեռնությանը կից գործող ինչոր մարմին է: Իրականում խորհուրդը կազմակերպությունների միություն էր, որտեղ ներգրավված են եղել նաև բազմաթիվ փորձագետներ, Ջավախքով զբաղվող հասարակական գործիչներ, պարզապես ակտիվիստներ, որոնք կապ չունեն «Ազատագրված տարածքների պաշտպանություն» հաս. նախաձեռնության հետ:

Մամուլի ասուլիսի ընթացքում լրագրողներն աննախադեպ ագրեսիվություն դրսևորեցին: Փաստորեն, օգտվելով ասուլիսին մասնակցող անձանց որոշակի անփորձությունից՝ լրագրողներն ուղղակի հարցախեղդ արեցին նրանց՝ հարևան պետության հասցեին ագրեսիվ հայտարարություններ կորզելու նպատակով: Այնինչ ասուլիսը նվիրված էր Ծալկայի դեպքերին, որտեղ սպանել էին մի հայ երիտասարդի և վիրավորել երկուսին, և շատ բնական է, որ Հայաստանում պետք է բողոքեին դրա դեմ: Լրագրողները, փաստորեն, մի կողմ դրեցին ասուլիսի առիթը և այն փաստերը, որոնք «Ջավախք» խորհրդին հիմք էին տվել վերոհիշյալ հայտարարությամբ հանդես գալու: Նրանք սևեռվեցին հատկապես այն հարցի վրա, թե «Ջավախք» խորհուրդն ինչպե՞ս է պատկերացնում իրադարձությունների հետագա զարգացումը, չէ՞ որ սա անպայման հանգեցնելու է պատերազմի: Իրենց դերը մոռանալով՝ լրագրողները սեփական կարծիքն էին արտահայտում: Տպավորություն էր ստեղծվում, որ Ջավախքի մասին ցանկացած խոսող, ըստ էության, հայ-վրացական թշնամանք է հրահրում, իսկ ջավախքցիների իրավունքները պաշտպանելու ուղղությամբ ցանկացած հայտարարություն ինքնաբերաբար հանգեցնելու է պատերազմի, հետևաբար՝ այդ հայտարարությունները պետք է չարվեն: Հակառակ դեպքում՝ անխուսափելիորեն կբացվի երկրորդ ճակատը, որից բոլորս պետք է սարսափենք:

Երկրորդ թեման, որն ասուլիսը լուսաբանելու եկած լրագրողներն ակտիվորեն զարգացնում էին, Ռուսաստանի մասնակցության հարցն էր: Տպավորությունն այն էր, որ բոլոր լրագրողների ենթագիտակցության մեջ նստած է այն միտքը, թե Ջավախքի հետ կապված ամեն ինչ Ռուսաստանի մութ ուժերի ձեռքի գործն է, և ոչ թե վրացիներն են ուզում հայաթափել երկրամասը, կամ ոչ էլ հայերն են փորձում տեր կանգնել իրենց հողին և իրավունքներին: Ռուսաստանն է, որ «փայտն առել, մտել է մեղվի փեթակն ու խառնում է»:

«Ջավախք» խորհրդի այդ ասուլիսը մեծ աղմուկ բարձրացրեց հայաստանյան ԶԼՄ-ում: «Շանթ» հեռուստաընկերությունը «սադրիչներ» անվանեց ասուլիսի մասնակիցներին, մամուլը նրանց մեղադրեց «երկրորդ ճակատ» բացելու և ռուսական գործակալ լինելու մեջ: Դրան հաջորդեցին անվտանգության մարմինների գործողությունները: Իսկ միգուցե այս ամենը հենց նրանք էլ ծրագրավորել էին:

ՈՎՔԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄ ՀՐԱՀՐՈՒՄ ՋԱՎԱԽՔՈՒՄ

Ծիծաղելի է կարծել, թե մեկ-երկու «սադրիչ» Երևանից կարող են պատերազմ սկսել Ջավախքում: Իսկ եթե ոմանց, այնուամենայնիվ, թվում է, թե իրադարձությունները զարգանում են պատերազմի վտանգը մեծացնելու ուղղությամբ, ապա անհրաժեշտ է հասկանալ, թե հատկապես ինչու է դա տեղի ունենում:

Պատերազմ հրահրելու գործում, անշուշտ, առաջին դերակատարը Վրաստանի իշխանություններն են: Այս իմաստով, նրանց կողքին են Վրաց Ուղղափառ Եկեղեցու սպասավորները: Թշնամանքի մթնոլորտը խեղաթյուրել է նույնիսկ ժողովրդի վերաբերմունքը հայերի նկատմամբ, ինչը բացահայտ երևում է հանրային կարծիքի ուսումնասիրություններից և մամուլի բազմաթիվ հրապարակումներից:

Ծալկայի ողբերգությունը հնարավոր դարձավ այն պատճառով, որ վրաց պետությունը տարածքում սվան և աջար փախստականներ է բնակեցնում, որոնց, փաստորեն, որպես պարգև խոստանում է հայկական այդ շրջանը, եթե նրանք այն մաքրեն հայերից: Թշնամանքի այդ մթնոլորտում նշված սպանությունը ոչ պատահական է, ոչ էլ առաջինը:

Վրաց եկեղեցին ուղղակի հարձակման է անցել՝ իր չորս թեմերով, որբանոցներով, երիտասարդական ուխտագնացություններով, միանձնուհիներով և զինված քահանաներով: Եկեղեցիներ են փորձում բացել նույնիսկ այն բնակավայրերում, ուր վրաց ուղղափառ հոտն ընդհանրապես բացակայում է: Որբանոցներ են ստեղծվում, որտեղ ծնողազուրկ վրացի երեխաներ են հավաքվում ամբողջ Վրաստանից՝ որպեսզի նրանցով բնակեցնեն հայկական երկրամասը: Նույն նպատակով Վրաստանի տարբեր շրջաններից բերվում են ուսանողներ՝ բավական բարձր կրթաթոշակներով: Ախալքալաքում գործող Թբիլիսիի պետական համալսարանի մասնաճյուղում, որն իբր բացվել էր տեղացի հայ ուսանողության համար, այս ուսումնական տարում առաջին կուրս ընդունվեց ընդամենն չորս տեղացի, որոնցից միայն երկուսն էին հայ: Հիշենք նաև Սամսարի եկեղեցու դեպքերը, երբ Թբիլիսիից ժամանած ուսանողները փորձում էին եկեղեցին մաքրելու անվան տակ նրա պատերից ջնջել հայերեն արձանագրությունները:

Տեղացի ուսուցիչների համեմատ ընդգծված բարձր աշխատավարձ են ստանում նաև վրացերենի նորեկ ուսուցիչները: Փոխարենը՝ դպրոցներում արգելված են հայոց պատմության և Հայաստանի աշխարհագրության դասընթացները, իսկ հայոց լեզվի և գրականության դասերը թույլատրված են ընդամենը ֆակուլտատիվ հիմունքներով, այն էլ՝ դպրոցների սուղ միջոցների հաշվին: Ըստ Երևանում Վրաստանի դեսպանի՝ սա իրենց համար ռազմավարական նշանակության հարց է:

Վրաստանի իշխանությունները հայտարարում են, թե իրենք «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում ավելի քան 130 մլն դոլար են ծախսելու Ջավախքի սոցիալ-տնտեսական կարիքների համար: Իրականում գումարի մեծ մասը պետք է ծառայի Ջավախքը Վրաստանին ինտեգրելու և Ջավախքով անցնող պանթուրքական նշանակություն ունեցող ճանապարհներն արդիականացնելու համար: Այս առումով ավելորդ չէ հիշել պոլիտբյուրոյի կողմից Լեռնային Ղարաբաղին տրամադրված 400 միլիոն ռուբլին, որը նույնպես կոչված էր մեղմել մարզում սոցիալ-տնտեսական իրավիճակը, սակայն գրեթե ամբողջությամբ ծախսվեց ադրբեջանական բնակավայրերը բարեկարգելու և ընդարձակելու վրա: Ըստ էության, այժմ նույն քաղաքականությունը վարում են վրացիները:

Փաստերի շարանն անվերջ է, իսկ դրանց թշնամական բնույթը՝ ակնհայտ: Վրացական իշխանությունները, Ջավախքով անցնող հաղորդակցությունների անվտանգությունն ապահովելու համատեքստում, հայկական երկրամասը հնազանդեցնելու խնդիր ունեն: Նրանց նպատակն է՝ երկրամասից դուրս մղել հայերին, իսկ մնացածին ինտեգրել և ձուլել: Միաժամանակ պետք է նկատել, որ վրացական իշխանություններն իրականում խուսափում են ռազմական առճակատումից՝ քաջ գիտակցելով, որ անհնար է հաղթել իր հողին ամուր կանգնած և այն պաշտպանող ժողովրդին: Նրանք նախընտրում են պատերազմի ավելի նենգ և աննկատ, «քաղաքակիրթ» ձևերը, նաև խուսափում են այնպիսի գործողություններից, որոնք կարող են հանգեցնել ջավախքահայության քաղաքական ինքնակազմակերպմանը:

Քարոզչամիջոցներով հաճախ փորձ է արվում Ջավախքի հիմնահարցը ներկայացնել որպես ռուսական ռազմակայանի դուրս բերման հետ կապված խնդիր: Իբրև թե Ախալքալաքում ապրող հայերն աշխատում են ռուսական այդ ռազմակայանում, և եթե ռուսական զորքերը դուրս բերվեն այնտեղից, հայերը կմնան անգործ, և դա սոցիալ-տնտեսական խնդիրներ կառաջացնի:

Դա արվում է այն նպատակով, որպեսզի ցույց տրվի Ռուսաստա-

նի շահագրգռվածությունը: Ասվում է, թե Ռուսաստանը չի ուզում հեռանալ տարածաշրջանից, մասնավորապես՝ Ախալքալաքի ռազմակայանից, և այդ պատճառով հայերին մղում է հակավրացական գործողությունների: Իրականում այս բացատրությունը շատ անհեթեթ է, որովհետև ռուսական զորքերի դուրս գալու հարցը վաղուց որոշված է: Մյուս կողմից, որքան էլ որ Ռուսաստանը փորձեր օգտագործել հայերին՝ իր ներկայությունը երկարաձգելու նպատակով, նա չէր կարողանա դա անել, եթե Ջավախքի հայությունը Վրաստանի իշխանությունից դժգոհելու պատճառներ չունենար: Իսկ եթե դժգոհությունը հիմնավոր է, այդ դեպքում առանց Ռուսաստանի էլ այն կդրսևորվի: Վերջապես ռազմակայանում աշխատող հայերի թիվը շատ սահմանափակ է: Ավելին, վրացերենի չիմացության պատճառաբանությամբ աշխատանքից զրկվածների թիվը Ջավախքում հաստատ ավելին է, քան ռազմակայանում աշխատող հայերի թիվը:

Ուշագրավ է, որ ռուսական ռազմակայանների հետ կապված հիշյալ արհեստածին խնդիրն արծարծում են ինչպես վրացիները, այնպես էլ ռուսական լրատվամիջոցները, և այդ ամենից ազդվում է նույնիսկ հայկական մամուլը: Անհեթեթ է մտածելը, թե ռուսական իշխանություններն են մեղավոր այն բոլոր գործողություններում, որոնք պետականորեն իրականացնում է Վրաստանը: Նույնքան անհեթեթ է նաև կարծել, թե ռուսներն են ծրագրավորում նման գործողությունների դեմ ջավախքահայերի ընդվզումը:

Իսկ ինչպե՞ս են Հայաստանի իշխանությունները վերաբերվում վրացական պետության վարած քաղաքականությանը: Նրանք իբրև թե փորձում են Ջավախքի տնտեսական խնդիրները լուծել վրացական իշխանություններին սիրաշահելու միջոցով: Նույնը անում են նաև Ջավախքի հարցով զբաղվող առանձին կազմակերպությունները:

Վերջերս «Ազգ» օրաթերթի ինտերնետային կայքէջում, պատասխանելով ընթերցողներից մեկի հարցին, թե մի՞թե կարելի է անտարբերության մատնել Ջավախքի հայությանը, արտգործնախարար Օսկանյանն ասել է. «Պետական մակարդակով այս հարցը նաև հայ-վրացական օրակարգում է: Ճիշտ է, մի կողմից գիտակցում ենք, որ վիճակը բավականին ծանր է, ամեն ինչ պետք է անենք, որ Ջավախքը չհայաթափվի, բայց, համենայն դեպս, պետք է հաշվի առնենք նաև Վրաստանի հնարավորությունները: Դրականն այսօր այն է, որ Վրաստանի իշխանություններն առավել մեծ ցանկություն են դրսևորում և արդեն գործնական քայլեր են անում՝ առավել մեծ ուշադրություն դարձնելու Ջավախքին, կոնկրետ՝ արդեն տնտեսական միջոցառումներ են նախատեսվում այդ տարածաշրջանում»: Այս պատասխանից ստացվում է, որ Ջավախքում քաղաքական հարցեր չկան, միայն սոցիալ-տնտեսական դժվարություններն են, որոնք Վրաստանը շատ է ուզում բարելավել և դա անում է իր սահմանափակ կարողությունների չափով: Այսինքն՝ վրացական իշխանությունները ոչ թե հայերին դուրս են մղում Ջավախքից, այլ՝ ընդհակառակը, անում են ամեն ինչ, որ նրանք մնան:

Պաշտոնական Երևանի այս պահվածքը Թբիլիսիում ընկալում են որպես թուլության նշան: Դա հանգեցնում է նրան, որ վրաց իշխանություններն ավելի ինքնավստահ են դառնում և ավելի են ծավալում իրենց հակահայ գործունեությունը: Նրանք հաճախ նույնիսկ դիմում են Հայաստանի իշխանությունների օգնությանը՝ ճնշելու համար ջավախքահայերին և Հայաստանում նրանց սատարողներին: Եվ նրանք էլ ընդառաջում են: Ազգային անվտանգության ծառայության գործունեությունից բացի հիշենք նաև այն հայտարարությունները, որոնցում երևանյան որոշ գործիչներ դատապարտեցին ջավախքահայերի բողոքի ակցիաները, նրանց առաջնորդներին կոչեցին ծայրահեղականներ և գործակալներ:

Հայաստանի իշխանությունները և Ջավախքի շահերով մտահոգ բոլոր կազմակերպությունները պետք է լավ պատկերացնեն, որ ջավախքահայության իրավունքների պաշտպանության հարցում յուրաքանչյուր զիջում բերում է վրացական ճնշման ուժեղացմանը, և ընդհակառակը, երբ իշխանությունների անգամ քողարկված հակահայ քայլերն արժանանում են վճռական հակազդեցության, նրանք մի քանի քայլ նահանջում են իրենց վտանգավոր ծրագրերից:

Փաստորեն, ջավախքահայությունն իր իրավունքները պաշտպանելու համար այսօր ստիպված է պայքարել երկու ճակատով՝ մեկը՝ վրացական իշխանությունների ոտնձգությունների, մյուսը՝ Հայաստանի իշխանության զբաղող և ճնշող մասնակցության դեմ:

Այսօր Ջավախքի նկատմամբ անտարբերությունը հավասարազոր է դավաճանության: Ջավախքահայության գլխավոր պահանջները քաղաքական են: Նրանք ուզում են ապրել իրենց հայրենիքում և չեն ուզում ինտեգրվել վրաց հասարակությանը, որովհետև հասկանում են, որ ինտեգրվել նշանակում է ի վերջո ձուլվել, իսկ դրան չհամաձայնելու դեպքում՝ հեռանալ երկրամասից և հայաթափ անել այն:

Հայաստանի իշխանությունները վաղ թե ուշ ստիպված են լինելու սատարել ջավախքահայերի քաղաքական պահանջներին: Ծայրահեղ դեպքում դա նրանց կպարտադրի ժողովուրդը: Հիշենք, որ Արցախի ազատագրական պատերազմի բազմաթիվ դրվագներ նույնպես տեղի ունեցան Հայաստանի հիշական իշխանության կամքին հակառակ:

Այսօր բոլորս պարտավոր ենք գիտակցել, որ Ջավախքին սպասում է երկու հեռանկար. մեկը Նախիջևանի ճակատագիրն է, մյուսը՝ Արցախի: Հայ ժողովրդի կամքից է կախված, թե այդ երկուսից որը կդառնա իրականություն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՓԱԿՈՒՂԻ

Սովորաբար «Ազատագրում»-ը տարբերակում է իրական ազգային խնդիրները քաղաքական կեղծ հարցադրումներից: Այս բաժանման մեջ Արցախյան հիմնախնդիրը, իհարկե, ազգային օրակարգի հարց է: Սակայն միջազգային իմաստով Ղարաբաղյան կարգավորումը և քաղաքական գործիչների՝ դրան վերաբերող արձագանքները ոչ մի կապ չունեն Արցախյան հիմնախնդրի այն ընկալման հետ, որը կարելի է կոչել ազգային: Պատճառն այն է, որ միջազգային կարգավորումը, ինչպիսի տարբերակով էլ այն տեղի ունենա, նշանակում է մեկ բան՝ միակողմանի զիջումներ՝ «տարածքներ կարգավիճակի դիմաց» սկզբունքով: Հետևաբար, ամեն անգամ, երբ բանակցային գործընթացը մոտենում է փաստաթուղթ ստորագրելու սահմանագծին, մեծանում է ռազմական հաջողությունները դիվանագիտական խայտառակ պարտությամբ փոխելու սպառնալիքը: Ռամբույեում Հայաստանի գործող նախագահը, փաստորեն, հերթական անգամ մոտեցավ այդ վտանգավոր սահմանագծին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՈՒՄԲՆ ԱՐԵԼ ԷՐ ԱՄԵՆ ԻՆՉ, ՈՐՊԵՍԶԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԼԻՆԵՐ

Ռամբույեում Քոչարյանն ու Ալիևը քննարկում էին Միջազգային ճգնաժամային խմբի (ՄՃԽ) առաջարկած տարբերակը: Այս անգամ էլ փաթեթի առանցքն ազատագրված տարածքները հանձնելու պահանջն էր: Տարածքների հանձնումից բացի այն նաև ենթադրում էր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեի անցկացում, ինչպես նաև՝ խաղաղապահ զորքերի մասնակցություն գործընթացին:

ՄՃԽ-ն արել էր ամեն ինչ, որպեսզի մշակեր այնպիսի փաթեթ, որն առավելագույնս ընդունելի կլիներ բանակցող կողմերի համար: Ընդունելի ոչ թե հայերի ու ադրբեջանցիների համար, այլ Հայաստանի և Ադրբեջանի իշխանությունների, որպեսզի յուրաքանչյուրը սեփական հանրության առաջ «զիջումներն արդարացնելու» և «հաջողություններով պարծենալու» հնարավորություն ունենար:

Օրինակ, հայտնի է, որ պաշտոնական Բաքուն հայտարարում է, թե Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը երբեք չի խախտվի, սակայն բանակցությունների ընթացքում վաղուց համաձայնել է Հայաստանին զիջել ԼՂԻՄ տարածքն ու Լաչինը: ՄՃԽ-ի ծրագրում այս հակասությունը լուծված էր այսպես. նախատեսված էր, որ հանրաքվեին պետք է մասնակցեր նաև Ղարաբաղ, այսինքն՝ Շուշի և Խոջալու վերադարձած ադրբեջանական համայնքը: Այդպիսի հանրաքվեն Ադրբեջանի համար կարող էր ընդունելի լինել, որովհետև եթե տեսականորեն մի քանի տարում ադրբեջանցիների բավականաչափ մեծ թիվ գար Ղարաբաղ, ապա քվեարկության արդյունքները կարող էին լինել հոգուտ ադրբեջանցիների: Իսկ եթե արդյունքները, այնուամենայնիվ, լինեին հոգուտ հայերի, ապա Բաքուն կարող էր չընդունել դրանք՝ հայտարարելով, որ բավարար պայմաններ չէին ստեղծվել ադրբեջանական համայնքի վերադարձի և մասնակցության համար: Ու կստացվեր, որ միջազգային հանրությունը կճանաչեր ԼՂԻՄ-ի ու Լաչինի միացումը Հայաստանին, իսկ Ադրբեջանը ձևականորեն կբողոքեր դրա դեմ: Փոխարենը՝ Բաքվի իշխանությունները ժողովրդին կմխիթարեին վերադարձված 5-6 շրջաններով, իսկ ԼՂԻՄ-ի կորստի համար կարդարանային, թե «անարդարություն է տեղի ունեցել, բայց միջազգային հանրությունը դա ճանաչել է, և իրենք չեն կարող պատերազմել ամբողջ աշխարհի հետ»:

Մյուս օրինակը: Դժբախտաբար, Հայաստանի անունից բանակցողները միշտ համաձայնել են Ադրբեջանին հանձնել ազատագրված շրջանների մեծ մասը՝ կարգավիճակի և անվտանգության երաշխիքների դիմաց: Զուգահեռաբար նրանք միշտ հայտարարել են, որ վերջին խոսքը պատկանում է Արցախի ժողովրդին, որը, սակայն, դժվար թե երբևե համաձայնի նման զիջումների: ՄՃԽ-ի տարբերակում երկու պայմանն էլ բավարարված էին: Անվտանգությունը պետք է երաշխավորեին միջազգային խաղաղապահները: Պայմանագրով պետք է նաև ամրագրվեր կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեի անցկացումը 15 տարի անց: Մինչ այդ ԼՂՀ-ն պետք է ունենար ինչ-որ միջանկյալ կարգավիճակ: Իսկ հանրաքվեի ընթացքում Արցախի ժողովուրդը պետք է ասեր իր «վճռական» խոսքը, որն արդեն չէր վերաբերի ազատագրված տարածքներին, քանի որ դրանք վաղուց հանձնված կլինեին Ադրբեջանին: Բացի այդ, կոմունիկացիոն միջանցքի դեպքում ինչ-որ տարբերակ էր գտնված, ըստ որի՝ այն ձևականորեն պետք է թողնվի Ադրբեջանի կազմում, իսկ գործնականում, «ազատ տնտեսական գոտու» կարգավիճակով, պետք է լինի, ըստ էության, հայկական վերահսկողության տակ, այսինքն՝ Երևանից Ստեփանակերտ գնալիս մենք որևէ խոչընդոտի չպետք է հանդիպենք՝ ոչ ադրբեջանական մաքսատուն, ոչ ոստիկանություն:

Փաստորեն, ճգնաժամային խումբը ձևակերպել էր մի փաստաթուղթ, որը բավարարում էր բանակցող կողմերի մինչ օրս հնչեցրած բոլոր փաստարկներին, և նրանք չէին կարող դրան առարկել: Քոչարյանը պետք է պարծենար, որ աշխարհը ճանաչել է Լեռնային Ղարաբաղի հայապատկանությունը, իսկ Ալիևը՝ որ կարողացել է ադրբեջանցիներին վերադարձնել շատ շրջաններ և նորից շրջափակել հայերին: Իսկ կատարված զիջումները երկուսն էլ պետք է բացատրեին միջազգային գործոնով, որին դժվար է հակադրվել: Այս ամենը միջազգային հանրությանը լավատեսության հիմք էր տալիս:

ՈՐ ԿԵՏԵՐԻ ՇՈՒՐՋ ՉՀԱՄԱՁԱՅՆՎԵՑԻՆ ՔՈՉԱՐՅԱՆՆ ՈՒ ԱԼԻԵՎԸ

Բանակցություններից հետո պաշտոնական տարբեր

աղբյուրներ հայտարարեցին, թե իբր այս անգամ դրանք ձախողվեցին, չարձանագրվեց այն բեկումը, որը սպասում էր միջազգային հանրությունը: Քոչարյանը և Ալիևը ժամեր տևած առանձնազրույցի ընթացքում առաջադրված 9 կետերից միայն 7-ի շուրջ համաձայնվեցին: Վիճելի կետերից մեկը վերաբերում էր Քարավաճառին (Քելբաջարին), մյուսը՝ իբր Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը: Այս երկրորդ սկզբունքն ակնհայտ սուտ է: Բանն այն է, որ եթե Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ կապված վիճելի պահ լիներ, այս բանակցություններն ընդհանրապես անիմաստ կլինեին: Ավելին, Քի Վեսթից հետո Ադրբեջանն արդեն համաձայնել էր ԼՂԻՄ-ն ու Լաչինը հանձնել Հայաստանին: Պրահյան գործընթացի ընթացքում միշտ քննարկվել է հետաձգված հանրաքվեի տարբերակը, որը նույնպես ենթադրում է առնվազն ԼՂԻՄ-ի միացում Հայաստանին: Իսկ այդ ստի բացատրությունը հետևյալն է:

Սովորաբար, բանակցությունների ժամանակ կողմերը քննարկում են ոչ միայն այն հարցը, թե իրենք փոխզիջման իմաստով ինչին են համաձայն, ինչին՝ ոչ, այլև քննարկում են, թե ինչպես պետք է իրենց քայլերը հետո ներկայացնեն ժողովուրդներին: Այս տեսակետից Հայաստանի և Ադրբեջանի միջև միշտ համաձայնություն է եղել: Հայաստանին միշտ ձեռնտու է եղել հանրությանը ներկայացնել, թե իբր Ադրբեջանի դիրքորոշումը ոչ կառուցողական է, իսկ Հայաստանինը՝ կառուցողական: Ադրբեջանի իշխանություններին էլ միշտ ձեռնտու է եղել հանրությանը ներկայացնել, թե իրենք կանգնած են ադրբեջանական ժողովրդի սրբազան իրավունքների պաշտպանության դիրքերում և չեն գնա որևէ զիջման: Ուստի՝ այս անգամ էլ հայտարարվեց, թե իբր համաձայնություն չի կայացվել երկու սկզբունքի շուրջ, որոնցից մեկը իբր «Ադրբեջանի տարածքային ամբողջականությունն է»:

Իսկ լավատեղյակ աղբյուրները պնդում են, որ իրականում հայկական կողմն է եղել չհամաձայնվողը: Մասնավորապես՝ Քոչարյանն առաջարկել է Քելբաջարին նույնպես տալ Լաչինի՝ «ազատ տնտեսական գոտու» կարգավիճակը՝ հիմնավորելով դա որպես «Շահումյանի փոխհատուցում»: Նա նաև առաջարկել է հանրաքվեն անցկացնել ավելի շուտ՝ նախքան ադրբեջանցի տեղահանվածներին վերադարձնելը:

ԱՅՍ ԱՆԳԱՄ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԷԻՆ ՆՈՒՅՆԻՍԿ «ՄԱՐԻՈԹ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Կարևոր է արձանագրել այն փաստը, որ հայկական կողմը ոչ թե Ռամբույեի հանդիպման ժամանակ, այլ արդեն նախօրոք էր խստացրել իր դիրքորոշումը: Դիրքորոշումները վերջնականապես հստակեցվեցին ոչ թե Ռամբույեում, այլ դրանից երկու-երեք շաբաթ առաջ: Այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ այս անգամ էլ համաձայնություն չի կայացվելու, թե Հայաստանի, թե Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցիչները բացահայտ ցույց տվեցին, որ այդ հանդիպմանն իրենք գալիս են տարբեր դիրքերից:

Երևանում կային գործիչներ, որոնք հստակորեն արտահայտվում էին զիջումների օգտին, և կային գործիչներ, որոնք լռություն էին պահպանում, բայց իրենց փոխարեն խոսում էր կարծես թե հանրությունը: Տեղի ունեցան մի քանի միջոցառումներ, եղան մամուլի հրապարակումներ, նույնիսկ՝ սոցիոլոգիական հարցումներ, որոնք ցույց էին տալիս, որ Հայաստանում և Ղարաբաղում դիրքորոշումները շատ ավելի արմատական են, քան այն, ինչ առաջարկում են որոշ քաղաքական գործիչներ, որոնց շարքում պետք է առանձնացնել Սերժ Սարգսյանին և նրա վերահսկողության տակ գտնվող գործիչներին: «Խաղաղությունը գին ունի». այդ օրերին պնդում էր պաշտպանության նախարարը՝ այդպիսի գին համարելով ոչ թե բանակի ոգու և մարտունակության բարձրացումը, այլ տարածքների հանձնումը («Գոլոս Արմենիի» 24.01.06): ԱԺ ՀՅԴ խմբակցության ղեկավար Լ. Մկրտչյանն ազատագրված տարածքները կոչում էր անվտանգության գոտի և նույնպես դեմ չէր դրանք հանձնելուն, իսկ անվտանգության հարցում հույսը կապում էր խաղաղապահների հետ («Հայոց աշխարհ» 11.01.06): ԱԺ և ՕԵԿ նախագահ Ա. Բաղդասարյանի համար ընդունելի էր ինչպես առաջարկվող փաթեթն ընդհանրապես, այնպես էլ նրա համատեքստում ադրբեջանցիների մասնակցությունը ԼՂ-ում ենթադրվող հանրաքվեին («Հայկական ժամանակ» 24.01.06): Իսկ ահա վարչապետ և ՀՀԿ նախագահ Ա. Մարգարյանը նախքան հանրաքվեն ԼՂ-ին տրվելիք ժամանակավոր՝ «անկախությունից ցածր» կարգավիճակի դիմաց պատրաստվում էր թշնամուն հանձնել ավելի քան 100 կմ Արաքսի ափից, երբ Նժդեհի հարյուրավոր զինակիցներ իրենց կյանքը տվեցին նույն ափի ընդամենը 40 կիլոմետրի համար («Հայկական ժամանակ» 1.02.06):

Սակայն այս ամենին զուգահեռ, առաջին անգամ ազատագրված տարածքները պաշտպանում էին նաև «Մարիոթ» հյուրանոցում: Տեղի ունեցավ բավականին մեծ միջոցառում, որտեղ նստած էին նույնիսկ իշխող կոալիցիայի որոշ ներկայացուցիչներ, մտավորականներ, որոնք միշտ եղել են իշխանամետ, տպվեց գիրք և թողարկվեց տեսասկավառակ: Մեկ այլ միջոցառում տեղի ունեցավ Գիտությունների ակադեմիայի նախագահության շենքում: Այս գործողությունները, որ տեղի ունեցան բանակցություններին նախորդող շաբաթների ընթացքում, վկայում էին, որ իշխանությունները ֆոն են պատրաստում Ռամբույեում իրենց մերժման համար: Ինչպես ասում են՝ «լավ է ուշ, քան երբեք»: Եթե Արցախի հարցում իշխանությունը սկզբունքային դիրքորոշում ունենար և ի սկզբանե գործեր նման մարտավարությամբ, ապա այսօր տարածքների հանձնման հարցն օրակարգից վաղուց հանված կլիներ: Բայց, ցավոք, մինչ օրս այդպես չէ:

ՈՒՐԱԽԱՆԱ՞ՆՔ, ՈՐ ԵՐԿՈՒ ԿԵՏԻ ՇՈՒՐՋ ՉԵՆ ՀԱՄԱՁԱՅՆՎԵԼ, ԹԵ՞ ՏԽՐԵՆՔ, ՈՐ ՅՈԹԻ ՇՈՒՐՋ ՀԱՄԱՁԱՅՆՎԵԼ ԵՆ

Հարկե լավ է, որ բանակցությունները ձախողվեցին: Սակայն արդյո՞ք դրանք անհետևանք մնացին:

9 կետերից երկուսի մերժումը նաև նշանակում է, որ, ըստ էության, մյուս 7 կետերը ընդունվել են: Մասնավորապես՝ վեճ չի եղել գլխավոր զիջման (1) դաշտային Հաբանդի (Աղդամի), Դիզակի (Զաբրայիլի և Ֆիզուլիի), Կովսա-



կանի (Զանգելանի) և Քաշունիքի (Ղուբաթլիի) հանձնման հարցում: Ուրեմն որքանո՞վ է արդարացված բանակցությունների ձախողման հետ կապված ոգևորությունը: Արդյո՞ք մենք պետք է ուրախանանք, որ երկու կետ չեն համաձայնեցրել, թե, այնուամենայնիվ, մեզ պետք է մտահոգի, որ յոթը համաձայնեցրել են:

Համաձայնեցված սկզբունքների թվում են նաև (2) խաղաղապահների մուտքն այն շրջաններ, որոնք Քոչարյանը և մյուսները պատրաստվում են հանձնել Ադրբեջանին, (3) դրանց ձևավորման սկզբունքը, որը ենթադրում է, որ խաղաղապահների կազմում չեն լինի թուրքեր, վրացիներ, իրանցիներ, ինչպես նաև ռուսներ, ֆրանսիացիներ և ամերիկացիներ, (4) այդ շրջաններ ադրբեջանական տարրի վերադարձը, (5) մի նոր հանրաքվեով ԼՂ կարգավիճակի որոշումը և (5) դրան, այսպես կոչված, ԼՂ ադրբեջանական համայնքի (շուշեցի և խոջալուեցի թուրքերի) մասնակցությունը, ինչպես նաև (7) Բերձորին (Լաչին) ազատ գոտու կարգավիճակի տրամադրումը և դրա անվտանգության ապահովումը:

Փաստորեն, սրանք բոլորն անընդունելի կետեր են:

Կա այսպիսի մի կարծիք, թե կապ չունի 100-ից 99-ն են ընդունել, թե՝ 9-ից 7-ը, կարևորը՝ որ մեկ կամ երկու կետ չի ընդունվել, դա նշանակում է, որ ոչինչ չի ընդունվել: Իրականում դա այդպես չէ, որովհետև երբ մի անգամ՝ «ընդհանուր պետության» տարբերակի քննարկման ժամանակ, Հայաստանի ներկայացուցիչները համաձայնվել են 5 կամ 6 շրջան հանձնել, դրանից հետո այլևս երբեք նրանց առիթ չի ընձեռվի քննարկել այդ շրջանները չվերադարձնելու հնարավորությունը: Նույնը վերաբերում է նաև Ադրբեջանին, որը դեռ Քի Վեսթում ընդունել է, որ ԼՂԻՄ-ը կարող է միանալ Հայաստանին: Ամեն անգամ նախորդ հանդիպման ժամանակ ընդունածը դառնում է հաջորդ հանդիպման համար ելակետային: Դա հատկապես զգացվում է Քի Վեսթում ձեռք բերված պայմանավորվածություններից հետո: Այն ժամանակ ոչ թե պայմանագրի, այլ առանձին ձևակերպումների վերաբերյալ արձանագրությունների տակ ստորագրելու իմաստով հայկական կողմը ընդունել է, որ այդ շրջաններն իրենը չեն, պետք է վերադարձվեն: Որպեսզի հիմա այս կետը Հայաստանը մերժի, անհրաժեշտ են ուղղակի կադրային փոփոխություններ: Սակայն այս դեպքում միայն Ռ. Քոչարյանի փոփոխությունը բավարար չէ: Այդ «ոչ պաշտոնական» ստորագրությունների պատասխանատվությունը նրա հետ միասին կիսում է ամբողջ քաղաքական վերնախավը, բոլոր այն քաղաքական գործիչները, ովքեր այդ հարցով արտահայտվել են միջազգային ատյաններում, մամուլում, և ում համար դժվար կլինի ստանձնած պարտավորություններից հրաժարվելը: Քանի դեռ պայմանագիր չի ստորագրվել, կարելի է հուսալ, որ համընդհանուր իշխանափոխությունից հետո ձևավորված ավելի ազգային իշխանությունը կարող է ասել. «Ես ոչ մի բանի էլ չեմ համաձայնվել»:

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ՓՈՐԱՑԱՎՆ ԻՐԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄՈՏ «ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԻ» ՏԵՂԱԿԱՅՈՒՄՆ Է

Նույնիսկ եթե ենթադրենք, որ ամեն անգամ բանակցությունների ժամանակ ինչ-որ մի հարցի շուրջ թեկուզ ձևականորեն անհամաձայնություն կստեղծվի, և հարցի լուծումն անընդհատ կհետաձգվի, սպառնալիքը դրանից չի վերանում, որովհետև բանակցող կողմերից կորզված ձևակերպումների տերերն այլևս այդ կողմերը չեն, այլ օտար միջնորդները: Հենց նրանց շահերն են, որ բանակցությունները շարունակելու պատճառն են: Այսօր այդ իմաստով ամենաշահագրգիռը Միացյալ Նահանգներն են: Դա է պատճառը, որ խաղաղապահ զորքերի խնդիրը բանակցային այս փուլի ամենակարևոր կետն էր: Այն, ըստ էության, դարձել էր այս քննարկումների կարևորագույն հարցը: Մնացած բոլոր կետերը՝ տարածքներ հանձնելու ժամանակացույցը, հանրաքվեն ուշ անցկացնելը, հարմարեցված էին խաղաղապահների մուտքին: Խաղաղապահների հարցում կարծես թե միջազգային վեճ ցուցադրվեց: Նախքան Ռամբույեն Ռուսաստանի պաշտպանության նախարարը հայտարարեց, որ ռուսական զորքերը նույնպես կարող են մասնակցել խաղաղապահ առաքելությանը, ինչին ի պատասխան ամերիկացիները շատ կտրուկ հակադարձեցին՝ հայտարարելով՝ ոչ դուք, ոչ մենք: Այսինքն՝ համանախագահ երկրները չպետք է մասնակցեն խաղաղապահ առաքելությանը: Կար նաև Վրաստանի մասնակցության հայտը: Վրացական սպան նույնիսկ եկավ, մասնակցեց խաղաղապահների տեղակայման վայ-

ների ուսումնասիրությանը: Թուրքական սպան ևս եկավ, մասնակցեց այդ ուսումնասիրությանը: Սակայն հայկական կողմի մտավախությունները փարատելու համար՝ որդեգրվեց երկրորդ սկզբունքը, որ խաղաղապահ առաքելությանը չեն կարող մասնակցել նաև հարևանները: Երրորդ հարևանի՝ Իրանի մասնակցությունը, բնականաբար, ոչ մի դեպքում թույլ չէր տրվի:

Ամերիկացիների նպատակը, իհարկե, տարածաշրջանում խաղաղություն հաստատելը չէ: Այստեղ 12 տարի խաղաղություն է տիրում: Բացի այդ, համաշխարհային փորձը վկայում է, որ խաղաղապահները երբեք որևէ տեղ չեն կարողացել խաղաղություն հաստատել: Վաշինգտոնի փորացավը, իհարկե, հատկապես իրանյան սահմանի մոտ «խաղաղապահների» տեղակայումն է: Պատահական չէ, որ հենց ամերիկացիներն են բոլորից շատ դժգոհում Ռամբույեի ձախողումից, և հաջորդ փուլի հանդիպումը ԱՄՆ-ում կազմակերպելու առաջարկը կարծես թե նույնպես դրանով է պայմանավորված: Ամերիկյան դերակատարությունը կարգավորման գործընթացի այս փուլում առաջնային է դառնում: Նրանց կողմից իրականացվող ճնշման վկայություններ են բարձրաստիճան դիվանագետների հաճախակի դարձած այցելությունները: Այս համատեքստում բոլորովին պատահական չեն Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Սթիվեն Մաննի պնդումը, թե 2006-ը համաձայնագրի ստորագրման տարի է, և այն սպառնալիքները, թե պայմանագիրը չստորագրելը կհանգեցնի ողբերգության:

Փաստորեն, տարածաշրջանում զորքեր տեղակայելու ամերիկյան ծրագրերի համար Ղարաբաղյան հակամարտությունը շատ հարմար առիթ է, որը բաց թողնել չի կարելի: Դրանում կհամոզվենք, եթե հաշվի առնենք հետևյալ հանգամանքները: Խաղաղապահները պետք է տեղակայվեն Արաքսի ափին, որը ներկայումս գրեթե անմարդաբնակ է: Ամենայն հավանականությամբ, խաղաղապահ առաքելությանը պետք է մասնակցեին եվրոպական, նատոյական երկրներ: Նրանց զորքերը պետք է տեղակայվեին 15 տարով, իսկ այդքան տարի վրանների տակ մեծ քանակությամբ զորք պահելն անհնար է, ուրեմն՝ պետք է սկսվի զինվորական շինությունների կառուցումը՝ զորանոցներ, սպաների համար բնակարաններ, ենթակառուցվածքներ և այլն: Իսկ դա նշանակում է, որ այստեղ ժամանակի ընթացքում նատոյական չափանիշներով կառուցված ռազմական լուրջ բազա կլինի, վերադարձող բնակչությունն էլ կվերածվի ռազմաբազային սպասարկող բնակչության: Նման հնարավորությունները չեն կարող լքվել խաղաղապահ առաքելության ավարտից հետո: 15 տարի անց, երբ «խաղաղապահները» վերադառնային, արդեն կառուցված զորանոցները, տեխնիկայի գարաժները, բոլորը պետք է ի սպաս դրվեին ամերիկացիներին, որոնք ձգտում են տարածաշրջանը պահել իրենց վերահսկողության տակ: Սա տեղավորվում է Ջ. Բուշի այն ծրագրում, ըստ որի՝ ամերիկյան հարյուրավոր ռազմաբազաներ պետք է վերաբաշխվեն իրենց համար ռազմավարական նշանակություն ունեցող նոր գոտիներում:

Այս համատեքստում բավականին պարզ է դառնում ամերիկացիների դժգոհությունը Ռամբույեի ձախողման պատճառով: Նույն համատեքստում շատ հավանական է դառնում, որ Հայաստանը, միգուցե նաև Ադրբեջանը ձախողեցին Ռամբույեն, որովհետև չէին ուզում վնասել հարևան Իրանին: Համենայն դեպս, արևմտամետ գործիչները և մամուլը, մեկնաբանելով Իսլամական Հանրապետության արտգործնախարար Մոթթաքիի այցը Հայաստան, որ տեղի ունեցավ բանակցություններին հաջորդող օրը, հայտարարեցին, որ Հայաստանը կարգավորման հերթական առաջարկը մերժել է հենց Իրանի պահանջով:

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԻՐԵՆ ՍՊԱՌԵԼ Է

Ինչևէ, նախորդ ձախողումների շարքում նաև ՄՓԽ-ի առաջարկած փաթեթի ձախողումը վկայում է, որ երևի թե արդեն անհնար է կարգավորման նոր տարբերակ առաջարկել, որը կընդունեն Հայաստանը և Ադրբեջանը: Այսօր Հայաստանը հիանալի առիթ ունի դուրս գալու Ղարաբաղյան հիմնախնդրի միջազգայնացման արատավոր ուղուց: Միջազգային կարգավորումը, ինչ տարբերակով էլ այն մատուցվի, նշանակում է մեկ բան՝ տարածքային միակողմանի զիջումներ: Սրանում այսօր շատերն են համոզված:

2001թ. Քի Վեսթի ձախողումից հետո միջազգային հանրությունը հանձնարարել էր Հայաստանի և Ադրբեջանի իշխանություններին՝ նախապատրաստել ժողովուրդներին խաղաղության և ցավոտ զիջումների: Հայաստանում այդ աշխատանքը գլխավորում էր անձամբ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Սակայն նա ձախողվեց, և այսօր հայ ժողովուրդն առավել քան երբեք պատրաստ չէ որևէ զիջման:

Ադրբեջանը նույնպես չի շտապում պայմանավորվել Հայաստանի հետ: Հնարավոր է, որ նա առաջնորդվում է այն համոզմունքով, որ մի օր ունենալու է բավականաչափ հզորություն, Հայաստանն էլ, դուրս մնալով տարածաշրջանային ծրագրերից և շրջափակված լինելով, այնքան է թուլանալու, որ, ի վերջո, մի օր իրենք կարող են Ղարաբաղի հարցն իրենց օգտին լուծել, այդ պատճառով իմաստ չունի այսօր որևէ զիջման գնալ: Ադրբեջանի այս համոզմունքը իրենց պարտվողականությամբ անուղղակիորեն խորացնում են Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչները:

Միայն միջազգային ուժերն են շահագրգիռ պահպանելու բանակցային գործընթացը, հետևաբար նաև՝ այսպես կոչված Հարավային Կովկասի գործերին միջամտելու հնարավորությունը, իսկ հաջողության դեպքում՝ նաև իրենց անմիջական ռազմական ներկայությունը: Այնպես որ, ամենայն հավանականությամբ, բանակցությունները վերակենդանացնելու փորձեր դեռ կլինեն: Սակայն հայ ժողովուրդը պետք է և արդեն կարող է արհամարհել բանակցային ընթացքը և վերակողմնորոշվել դեպի հիմնախնդրի միակողմանի լուծումը: Այն առաջին հերթին ենթադրում է ազատագրված բոլոր տարածքների լիարժեք բնակեցում և համակողմանի զարգացում: Եվ եթե Ադրբեջանը փորձելու է հարցը պատերազմով լուծել, ուրեմն թող հանդիպի հզոր թիկունք ունեցող և ոչ թե անապատը պաշտպանող հայկական բանակին:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿՈՉ

Մամուլի հաղորդագրումների և այլ տեղեկությունների համաձայն, մարտի սկզբին ՀՀ ԶՈՒ բարձրաստիճան կազմի օպերատիվ հավաքում պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը լարվածության նկատելի շեշտով կրկնել է նախկինում իր ասածները, որի ամփոփ իմաստը եղել է հետևյալը. «Ի՞նչ էինք ուզում մենք 1988-ին: Ուզում էինք, որ ԼՂԻՄ-ը միանար Հայաստանին: Հիմա ուրիշ էլ ի՞նչ ենք ուզում: Պատերազմի ժամանակ մենք հող չէինք ազատագրում, այլ կրակակետեր էինք ոչնչացնում: Ի՞նչ ազատագրված տարածք, դա անվտանգության գոտի է: Վերջին 100 տարում այդտեղ հայեր չեն ապրել: Ձեզնից ո՞վ կարող է ապացուցել, որ Աղդամը հայկական է եղել: Իսկ խաղաղապահ զորքերի տեղակայումն անվտանգության գոտում նպաստավոր է մեզ համար»:

Այս առիթով «Ազատագրված տարածքների պաշտպանություն» հասարակական նախաձեռնության գրասենյակում կազմակերպված կլոր սեղանին մասնակցեցին պատերազմի մասնակից մի շարք հրամանատարներ, նրանց թվում՝ պաշտպանության նախկին նախարարներ Վազգեն Մանուկյանը և Վաղարշակ Հարությունյանը: Մասնակիցներն անհանդուրժելի համարեցին այն հանգամանքը, որ Հայաստանում տարածքների հանձնման մասին հիմնականում խոսում է պաշտպանության նախարարը: «Նրա հայտարարությունները ջարդում են մեր ժողովրդին և հույս են տալիս թշնամուն»,- ընդգծեցին մասնակիցները: Կոչ արվեց քաղաքական ուժերին՝ սկսել Սերժ Սարգսյանի պաշտոնանկության գործընթաց: Ավելի ուշ նախկին հրամանատարների հրապարակած հայտարարության մեջ ասվում է. «Պաշտպանության նախարարը, Ադրբեջանում օրեցօր ծավալվող հակահայ հիստերիային և պատերազմական աճող սպառնալիքին արժանի հակահարված տալու փոխարեն, այս էլ որերորդ անգամ դավաճանորեն փորձում է կոտրել հայ ժողովրդի և բանակի մարտական ոգին, պարտվողական և խուճապային տրամադրություններ սերմանել բարձրագույն հրամանատարության և զինվորների շրջանում: Վերջին տարիների հետևողական այս վարքագիծը պայմանավորված է ՀՀ նախագահի պաշտոնին տիրելու նրա անհագուրդ ցանկությամբ»: Հայտարարության հեղինակները, ընդգծելով, որ «իշխանությունը բռնազավթած անձինք հայ ժողովրդի և Հայաստանի անունից ներկայանալու իրավունք չունեն, և նրանց հետագա պաշտոնավարությունը հղի է աղետալի հետևանքներով», պահանջում են նախ դադարեցնել Ղարաբաղյան խնդրի շուրջ Ադրբեջանի հետ տարվող բանակցությունները մինչև Հայաստանում օրինական և ազգային իշխանությունների կազմավորումը և ապա առաջարկում են Հայաստանի կուսակցություններին՝ նախաձեռնել ՀՀ գործող պաշտպանության նախարարի պաշտոնանկության գործընթաց:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մտահոգված լինելով ձգձգվող բանակցությունների անարդյունավետությամբ և տարածքային զիջումների հնարավորության վերաբերյալ ժամանակ առ ժամանակ հնչող կարծիքներով՝ մենք՝ ներքոստորագրյալ երիտասարդական կազմակերպություններս, հայտնում ենք ՀՀ և ԼՂՀ իշխանություններին, հայ և միջազգային հանրությանը, որ.

- մերժում ենք հայրենի տարածքների հանձնման որևէ հնարավորություն,
- դատապարտում ենք դրա մասին պետական և քաղաքական գործիչների հայտարարությունները,
- պահանջում ենք Արցախյան պատերազմի ընթացքում մեր Հայրենիքի ազատագրված հատվածների վերաբերյալ այլևս չօգտագործել «անվտանգության գոտի», «վերահսկվող տարածք» և նմանատիպ այլ արտահայտություններ,
- կոչ ենք անում ՀՀ և ԼՂՀ կառավարություններին բարենպաստ պայմաններ ստեղծել ազատագրված բոլոր և հատկապես շփման գծին հարող շրջանների վերաբնակեցման և զարգացման համար,
- երիտասարդությանը կոչ ենք անում բոլոր ուժերով օժանդակել վերաբնակեցման ուղղությամբ իրականացվող պետական և մասնավոր ծրագրերին,
- հայ երիտասարդությունը երբեք չի նվազեցնի իր պահանջատիրությունը դեռևս Ադրբեջանի տիրապետության ներքո գտնվող հայկական մյուս շրջանների նկատմամբ,
- երիտասարդությունը պատրաստ է օժանդակել կառավարությանը՝ վերոնշյալ դրույթները իրականացնելու համար:

Հայտարարությունը ստորագրել են «Միտք» երիտասարդական, վերլուծական կենտրոնը, Երիտասարդ քաղաքական գործիչների և Երիտասարդ արևելագետների ակումբները, Քաղաքական հետազոտությունների ակադեմիան, Հայ երիտասարդների ֆորումը, «Ալիք» իրավապաշտպան և «Շահեն» երիտասարդական հկ-ները, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունը և ՀՀԿ երիտասարդական կազմակերպությունը, ՀԱՄ «Ոգու պահապաններ» և ԺԱԿ երիտասարդական կառույցները, ԵՊՀ, Տնտեսագիտական և Մանկավարժական համալսարանի ուսխորհուրդները:

«Ազատագրում»-ի նախորդ համարում մենք հիշատակեցինք պետական համակարգի չորս սկզբունքներ, որոնք նյութապաշտություն և անբարոյություն են սերմանում, պառակտում են ազգային, համայնքային, նույնիսկ ընտանեկան միասնությունը: Չորրորդ հանրապետության ճարտարապետության համատեքստում դրանք բոլորը, փաստորեն, վերանայման կարիք ունեն: Սկզբունքներից առաջինը «մրցակցությունն» է: Խնդիր ենք դրել՝ գտնել այս սկզբունքի այլընտրանքը, որը պայմանականորեն կոչել ենք «համագործակցություն»: Սակայն նախ փորձենք փոքր-ինչ հանգամանորեն ներկայացնել, թե ինչ նկատի ունենք «մրցակցություն» ասելիս:

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից տնտեսագիտությունը համոզված է, որ արդյունավետ զարգացում հնարավոր է միայն շուկայական մրցակցության պայմաններում: Քաղաքագիտությունը նույն համոզմունքն ունի բազմակուսակցական ժողովրդավարության վերաբերյալ, ինչը նույնպես մրցակցության ձև է: Իրավաբաններն իրենց հերթին արդարադատության արդյունավետությունը կապում են դատական կողմերի մրցակցության հետ: Բուհական և աշխատանքի ընդունելությունները, աճուրդները, ամեն բան փորձ է արվում կազմակերպել մրցույթի միջոցով:

Սակայն մրցակցային սկզբունքի կիրառումը ոչ միայն չի լուծում տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրները, այլև շատ հաճախ հավելյալ անարդարության պատճառ է դառնում: Եվ մեղավորն այստեղ բոլորովին էլ կոռուպցիան չէ: Անարդարությունը չի պակասում նույնիսկ այն դեպքում, երբ ճշգրիտ պահպանվում են մրցույթի օրենքները: Եթե բազմակուսակցական ժողովրդավարությունը ձևավորում է մեծահարուստների քաղաքական վերնախավ, ինչպես դա վաղուց տեղի է ունեցել արևմտյան ժողովրդավարություններում, եթե շուկայական մրցակցությունն ամենուր միայն ավելացնում է շահագործումը և խորացնում դասակարգային ճեղքվածքը, իսկ լավ վճարված փաստաբանը կարող է ազատ արձակել մարդասպանին, այսինքն՝ այս համակարգերից յուրաքանչյուրում առանձին վերցրած խնդիրները չեն լուծվում, ուրեմն՝ պետք է փնտրել ավելի ընդհանուր և հիմքային սխալ: Բացառված չէ, որ այդ ընդհանուր սխալը թաքնված է հենց մրցակցության սկզբունքի էության մեջ:

Ինչպե՞ս են մրցակցության կողմնակիցները հիմնավորում դրա անհրաժեշտությունը: Նախ, ընդունված է կարծել, թե մրցակցությունը մարդը չի հորինել, և այն բնականորեն առկա է հասարակական հարաբերություններում: Սա իր հերթին հիմնված է մի ենթադրության վրա, թե իբր մարդիկ, բոլորը և միշտ, հակամետ շահեր ունեն, բոլորն ուզում են շատ ուտել, ավելի շատ հաճույքներ վայելել, իշխել, և բնական է, որ դա կարող են անել մյուսների պակաս ուտելու, պակաս վայելելու հաշվին: Ըստ այդմ, շուկայական մրցակցությունն է որոշում, թե ինչ, որքան և ում կողմից պետք է արտադրվի և ինչ համամասնությամբ բաշխվի մարդկանց միջև, լավագույն շուկայական առաջարկն է, որ գնորդ է գտնում, և վճարունակ պահանջարկն է, որ բավարարվում է: Նույնպիսի շահերի բախում առկա է իրավական, քաղաքական և այլ հարթություններում:

Երկրորդ. մրցակցությունը հակադրվում է հակամարտությանը: Այսինքն, որպեսզի հակամետ շահերի պատճառով մարդիկ միմյանց կոկորդ չկրծեն, ապա հանրությունը պայմանավորվում է խաղի կանոնների վերաբերյալ: Օրինակ, քաղաքական ուժերը պայմանավորվում են իշխանությունը որոշել ոչ թե քաղաքացիական պատերազմով, այլ ընտրություններով, հարստանալ ոչ թե թալանով, այլ առևտրով: Փաստորեն, մրցակցային օրենքները ոչ միայն բնական են, այլև արհեստական և ներդրվում են մարդկանց որոշումով՝ իրենց փոխհարաբերությունները կանոնակարգելու նպատակով, որպեսզի չլինեն շահերի ավելի կոշտ, ուժային բախումներ:

Երրորդ. ենթադրվում է, որ ազատ և արդար մրցակցությունն ավելի արդյունավետ է, քան մենատիրության դրսևորումները: Այսինքն՝ ազատ շուկան ապահովում է առավելագույն տնտեսական աճ, իսկ սեփականության կենտրոնացումը՝ ոչ, ընտրություններով որոշվում է լավագույն քաղաքականությունը, իսկ բռնատիրությունը միշտ անարդար է և սխալ, վերջապես դատական վեճի միջոցով է հնարավոր դառնում բացահայտել արդարությունը:

Մի խոսքով, տեսական պնդումն այն է, թե բնական մրցակցությունը միշտ էլ կա, բայց որպեսզի այն չվերածի հակամարտության և զարգացում ապահովվի, կնքվում է հանրային պայմանագիր ուժային մեթոդների չդիմելու և մրցույթը կանոնակարգելու մասին: Սակայն կյանքն այլ կողմ էլ ունի:

Համաշխարհային, իսկ հիմա նաև հայկական փորձից կարելի է նկատել, որ ընտրություններն «արդար» չեն համարվի այնքան ժամանակ, քանի դեռ չեն ձևավորվել երկու-երեք հզոր և հարուստ քաղաքական ուժ (հանրապետականները և դեմոկրատները՝ ԱՄՆ-ում, պահպանողականները և լեյբորիստները՝ Մ. Բրիտանիայում և այլն), որոնք միմյանց միջև կպայմանավորվեն, որ այլևս վարչական և ուժային ռեսուրսներ չեն կիրառելու, ընտրակաշառքների վրա փող չեն ծախսելու, այլ ժողովրդի ձայները գնելու են միայն քարոզչությամբ, հակառակորդի իշխանության օրոք էլ իրենց ունեցվածքը երբեք չի վտանգվելու: Այսինքն՝ մրցակցող խմբերից նրանք վերածվում են կառավարող օլիգարխիայի, որի հետ մրցակցելն այլևս անհնար է: Սա, ի դեպ, տեղի է ունենում միայն այն դեպքում, երբ ժողովուրդն ամբողջությամբ վերածվում է քարոզչությամբ կառավարելի ընտրազանգվածի, որը մարզական ֆանատների նման ֆուտբոլ չի խաղում, բայց փորձում է իրեն նույնացնել լավագույն թիմի (կուսակցության) հետ:

Տնտեսության դեպքում նույնպես կոռուպցիան չի վերանա, և հարկային կարգապահություն չի լինի այնքան ժամանակ, քանի դեռ վերջնականապես չի կայացել ֆինանսական վերնախավը, և չի ձևավորվել սեփական գերազանցությունն ամրագրող օրենսդրական դաշտ: Հայաստանում առայժմ իշխանությունն է ձևավորում օլիգարխիա, իսկ Ամերիկայում, օրինակ, վաղուց արդեն օլիգարխիան է իշխանություն ձևավորում: Քանի դեռ վերնախավը վերջնականապես չի կայացել, պայքարը շարունակվելու է բոլոր, այդ թվում՝ անթույլատրելի միջոցներով: Այլ կերպ ասած, երբ շահերը իսկապես հա-

կամետ են, ապա այդ պայմանագիրը գործում է միայն այն դեպքում, երբ հանրության մեջ արդեն ձևավորվել են քիչ թե շատ հավասարազոր ուժի կենտրոններ, որոնք այլևս չեն ուզում զբաղվել փոխադարձ ոչնչացմամբ և ձգտում են միասին պահպանել իրենց իշխանությունը հասարակության մնացած զանգվածի նկատմամբ:

Ազատ և կանոնակարգված մրցակցությունը որոշ իմաստով կեղծ է, անհավասարների կանխորոշված մրցակցություն է, որում միշտ էլ հաղթելու են ուժեղն ու հարուստը: Նրանք են սահմանում այն կանոնները, որոնց միջոցով վերարտադրվում է իրենց իշխանությունը: Նույնը տեղի է ունենում նաև միջազգային մակարդակով: Եվրոպան, ԱՄՆ-ը, Ճապոնիան իրենց ներսում կարողանում են կիրառել արդար մրցակցության կանոնները միայն մնացած աշխարհին շահագործելու շնորհիվ: Աղքատ երկրներին նրանք պարտադրում են նույն մրցակցային կանոնները՝ քաջ գիտակցելով իրենց գերազանցությունն այդ մրցույթում: Դա թույլ երկրներում տնտեսական և քաղաքական լծակներ ունենալու հնարավորություն է տալիս նրանց: Չենթարկվողների նկատմամբ պատժամիջոցներ են կիրառում կամ նույնիսկ ռմբակոծում:

Աղքատ երկրների վերնախավերը հայտնվում են ծանր վիճակում: Նրանք չեն կարող ամբողջությամբ կիրառել ազատ մրցակցության կանոնները, որովհետև այդ դեպքում սեփական երկրում իրենք կպարտվեն արտաքին ուժերից, և տնտեսական ու քաղաքական իշխանությունը կանցնի օտարերկրյա խամաճիկների ձեռքը: Մյուս կողմից, բավարար ներքին ռեսուրսներ (օրինակ՝ նավթ) չունենալու դեպքում՝ նրանք չեն կարող մերժել նույն այդ արտաքին ուժերի կողմից պարտադրվող մրցակցային ազատությունը: Դա է պատճառը, որ երրորդ աշխարհի այն երկրները, որոնք հարուստ ընդերք ունեն, ունենում են նաև արտաքին աշխարհի համար ավելի փակ, կոշտ վարչակարգեր՝ երբեմն բռնատիրական, երբեմն կրոնապետական կամ այլ իմաստով գաղափարականացված: Իսկ մյուսները, որոնց ընդերքն աղքատ է (Հայաստանն այդպիսի երկիր է), ունենում են արտաքին ուժերից մեծապես կախված՝ խամաճիկային իշխանություններ: Վերջինները մի կողմից արտաքին պարտադրանքի պատճառով ստիպված են ընդունել օրենքներ, որոնք տնտեսական, քաղաքական և այլ ասպարեզներում սահմանում են ազատ մրցակցության կանոններ, մյուս կողմից չեն կարող պահպանել իրենց իշխանությունը, եթե չխախտեն այդ կանոնները (չկեղծեն ընտրությունները, կամայականորեն չտնօրինեն բիզնեսի շահավետ ոլորտները): Բայց յուրաքանչյուր խախտման համար ստիպված են լինում ինչ-որ բան զիջել արտաքին ուժերին՝ աստիճանաբար վերածվելով խամաճիկների: Միմյանց դեմ պայքարող կուսակցությունների նպատակը Հայաստանում ոչ այլ ինչ է, քան այդ խամաճիկի դերը ստանձնելը:

Նկատենք, որ Հայաստանի պես երկրների համար այս իրավիճակը ստեղծվում է միայն ռազմատնտեսական մրցակցության հարթությունում: Բայց կյանքն ունի շատ ավելի կարևոր հարթություններ, որոնց մասին հիմա չենք խոսում:

Միամտություն է կարծել, թե մեր երկրում կգործեն մրցակցային «արդար» կանոնները, երբ մեր եկամուտներն ավելի քան տասն անգամ պակաս են «ժողովրդավարական» երկրների եկամուտներից: Այս պայմաններում չի կարող ձևավորվել քիչ թե շատ կայուն և անկախ վերնախավ, որը կսահմանի արդար մրցակցության կանոններ և ինքն էլ կհետևի դրանց: Առավել ևս միամտություն է կարծել, թե ժողովրդավարական և շուկայական օրենքների գործելու դեպքում մեր երկիրը դրանց օգնությամբ երբևէ կարող է զարգանալ և հարստանալ, գնահատանքի արժանանալ, անկախ լինել կամ արդար կառավարվել:

Փոխարենը՝ ակնհայտ է, որ, մշտապես մրցակցային վիճակում գտնվելով, մենք «վատ» արարքներ ենք գործում՝ կաշառք ենք տալիս, ստում ենք և խաբում, թայֆաներ ենք կազմում և թշնամանում միմյանց: Ընդ որում՝ այս ամենի համար չենք ամաչում, ավելին՝ արդարանում ենք. եթե մենք չկաշառենք, մրցակիցը կկաշառի, մենք չխաբենք, մեզ կխաբեն:

Այն, որ մրցակցությունն իրականում բնական վիճակ չէ, և մրցակցային օրենքներն են, որ ազդում են մեր վարքագծի վրա, վկայում է նաև վերջին 20 տարիների մեր փորձառությունը: ԽՍՀՄ-ի օրոք էլ կային թե մրցակցություն, թե դրանից բխող արատավոր երևույթներ: Սակայն երբ որդեգրվեց շուկայական համակարգը, և մրցակցությունը համատարած դարձավ, հաշված տարիների ընթացքում անճանաչելիության աստիճան փոխվեցին մարդկանց վարքագիծը և արժեքային համակարգը: Դա կարող են հաստատել բոլոր նրանք, ում տարիքը 35-ից բարձր է:

Այնուամենայնիվ, մեզնից շատերն այսօր էլ մտքով հաստատում են շուկայական, կուսակցական և այլ տեսակի մրցակցության անհրաժեշտությունը: Բայց հոգով գրեթե բոլորը մերժում են այն: Ապրելով մրցակցային համակարգի կանոնների համաձայն՝ մենք կամ նյարդայնանում ենք, կամ խորշում ինքներս մեր արածից: Կուսակցականությունը պառակտվածություն ենք համարում և դատապարտում, մեծ հարստությունը հանցագործություն ենք համարում, բայց համառորեն չենք ուզում դուրս գալ դասակարգային պայքարի:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ

Երբ ինչ-որ մեկը քննադատում է շուկայական հարաբերությունները, նա մեղադրվում է վարչահրամայական-պլանային կամ, լավագույն դեպքում, մենատիրական տնտեսության կողմնակից լինելու մեջ: Երբ մեկ ուրիշը քննադատում է ժողովրդավարությունը, սա էլ մեղադրվում է բռնատիրության կամ անձնիշխանության կողմնակից լինելու մեջ: Մեր քննադատությունը, սակայն, հավասարապես վերաբերում է թե ժողովրդավարությանը, թե բռնատիրությանը, թե ազատ շուկային, թե տնտեսական մենատիրությանը: Մենք հերքում ենք հակամետ շահերի բնական առկայության վարկածն ընդհանրապես: Քննադատում ենք այդ կեղծ վարկածի վրա կառուցված տնտեսական, քաղաքական և բոլոր այլ տեսություններ: Գտնում ենք, որ նման տեսությունների կիրառումը հենց ինքն է պատճառ դառնում, որ հանրային հարաբերություններում իշխեն հակամետ շահերը: Իհարկե, մեզ նույնպես կարող են մեղադրել, որ չենք տեսնում ակնհայտը, որ մարդիկ ունեն շահեր, և դրանք միշտ չէ, որ համընկնում են: Բայց պետք չէ շտապել:

Գոնե ընտանիքում հակամետ շահեր գոյություն չունեն, և այնտեղ չկա որևէ մրցակցություն: Բայց կան անորակ ընտանիքներ, որոնցում կարող են վեճեր լինել, ասենք, ժառանգությունը բաշխելիս կամ ծախսերի առաջնահերթությունը որոշելիս: Ընկերության դեպքում նույնպես մրցակցությունը բացակայում է, իսկ հայտնվելու դեպքում դադարում է ընկերությունը: Մրցակցության նշույլ անգամ չկա պատերազմին մասնակցող կամավորականների ջոկատում, բայց առատորեն առկա է պարապ մնացած ժամկետային ծառայողների զորանո-

ցում: Ստեղծագործելիս չեն մրցում, բայց ինչպե՞ս են մրցում ստեղծագործական միության նախագահ ընտրելիս: Այլ կերպ ասած, հավասարապես առկա են մարդկային որակի երկու դրսևորում, որոնցից մեկը ենթադրում է նվիրյալ և անշահախնդիր ծառայություն ընտանիքին, ընկերությանը, համայնքին, գիտությանն ու արվեստին, ազգին և մարդկությանը, իսկ մյուսը շահ է փնտրում և ամենուր շահ տեսնում՝ փչացնելով մարդկային հավաքականության բոլոր բնական կառույցները՝ ընդհուպ մինչև ընտանիքը:

Գլխավոր հարցն այն է, թե երբ մենք կյանքի տնտեսական, քաղաքական, համայնքային և այլ ոլորտները կառավարելու համար արհեստական համակարգեր ենք ստեղծում (օրինակ՝ պետական հաստատություններ), օրենքներ ենք գրում, այս երկուսից ո՞ր որակն ենք ճնշում և որի՞ն ենք զարգանալու հնարավորություն տալիս: Մերօրյա պետությունը, այսինքն՝ ոչ թե Երրորդ հանրապետությունը, այլ համաշխարհային պետական մշակույթն ընդհանրապես, պարարտ հող է ստեղծում՝ մրցակցությունը խորացնելու, այդ հիմքի վրա մարդկային հավաքականությունները պառակտելու համար: Համապատասխանաբար, ճնշվում է համագործակցության ոգին: Քաղաքական, տնտեսական, արդարադատության, կրթական և այլ համակարգերում այն արդեն գրեթե բացակայում է: Մշակութային և գիտական ոլորտներում, օրինակ, ստեղծագործական միությունների և ակադեմիական ընտրությունների համակարգերի ներդրման պատճառով ծավալված մրցակցությունը սպանում է ստեղծագործական ոգին: Այն նաև քայքայում է համայնքային կյանքը և թափանցել է ընտանիք:

Մարդիկ մրցակցում են, երբ նպատակները տարբեր են, միմյանց հակասող: Իսկ ահա համատեղ գործ անելիս, նույն նպատակը հետապնդելիս նրանք համագործակցում են: Ընդհանուր գործը տուժում է, երբ մասնակիցները դրան խառնում են իրենց նեղ անձնական նպատակները: Օրինակ, երբ քաղաքացիներն անդամակցում են որևէ կուսակցության, նրանք, փաստորեն, համագործակցում են իրենց կուսակիցների հետ իշխանության գալու կամ ինչ-որ ծրագիր իրագործելու հարցում, բայց հաճախ է պատահում, որ կուսակցական ղեկավարության ընտրության ժամանակ կուսակցությունները պառակտվում են (ինչպես դա պատահեց ԱԺՄ-ի հետ): Ընդդիմադիրները փորձում են համագործակցել, որպեսզի կարողանան ազատվել գործող իշխանությունից, սակայն դա չի ստացվում այն պարզ պատճառով, որ յուրաքանչյուրն անընդհատ մտածում է նաև այն մասին, թե ինչպես անի, որ հենց ինքն առաջնորդի ընդդիմությունը և ապագա իշխանությունում դառնա առաջին դեմքը: Գործարարները կարող են միմյանց հետ պայմանավորվել և շուկայում որևէ գին թելադրել: Սակայն եթե նրանք զուգահեռաբար վիճեն, թե ո՞վ ո՞ր տարածքում պետք է իր ապրանքը վաճառի, ապա համագործակցությունը չի ստացվի: Ավտովթարի դեպքում կողմերը համագործակցաբար խուսափում են ոստիկանից, բայց եթե համաձայնության չեն գալիս այն հարցում, թե իրենցից ով է մեղավորը, ապա վեճը տեղափոխվում է իրավական հարթություն:

Բոլոր նկարագրված դեպքերում մրցակիցներն են, որ համագործակցում են: Նրանց շահերն ինչ-որ չափով համընկնում են, և նրանք ժամանակավորապես միավորվում են, դաշինքներ են կազմում՝ այդ ընդհանուր նպատակն իրագործելու համար: Նման համագործակցությունը մրցակցային հանրության օրգանական մի մասն է: Մրցակցության համեմատ այսպիսի համագործակցությունն էլ է լավ: Սակայն, մեր պատկերացրած այլընտրանքն ուրիշ է:

Կարող ենք դիտարկել մի վիճակ, երբ հանրային ուժերի, քաղաքացիների և կազմակերպությունների համագործակցությունը կարող է համաժողովրդական տարողություն ունենալ: Մասնավորապես՝ համագործակցության տպավորություն է թողնում խիստ կանոնակարգված և չափավոր մրցակցությունը, որը հայտնի է «իրավական պետություն», «քաղաքական կուլտուրա» և նման այլ անուններով: Սրա տարբերակները կան Եվրոպայում: Մեզանում շատերը դրանց նախանձով են վերաբերվում՝ մոռանալով, որ խոսքը նույն այդ մրցակցությունից հոգնած մի քաղաքակրթության մասին է, որը ժամանակին կարողացել էր գաղութացնել ամբողջ աշխարհը, բայց որը վերջնականապես ուժասպառ եղավ երկու աշխարհամարտերից հետո:

Համագործակցություն ասելով՝ մենք նկատի ունենք բոլորովին այլ բան: Դիտարկենք դա ընտանիքի մոդելում: Ընտանիքի անդամները համագործակցում են ոչ թե այն պատճառով, որ իրենց շահերն ինչ-որ պահի համընկնում են, այլ որովհետև մեկ մարմին են և մեկ հոգի: Եթե ընտանիքը բավարար որակ ունի, ապա նրա անդամների դաշինքը հավերժ է: Բայց նույնիսկ անորակ և բաժանվող ընտանիքները վերջնականապես չեն լուծարվում. առնվազն երեխաներին վերաբերող մասով նրանք շարունակում են փաստացի գոյություն ունենալ: Եթե ընտանիքում վերանում է սերը, ապա այն, որպես կանոն, փոխարինվում է ատելության տառապանքով, որովհետև ընտանիքի անդամներն այլևս չեն կարող միմյանց նկատմամբ անտարբեր մնալ: Հաճախ նույնիսկ բաժանված ամուսինները չեն դադարում միմյանց խանդել: Մի խոսքով, ընտանիքի անդամներին միավորում են բնական, ամուր կապեր և ոչ թե ինչ-որ պայմանագրային հարաբերություններ:

Ազգային համագործակցությունը նույնպես ժամանակավոր շահերի համընկնման պատճառով չէ, որ տեղի է ունենում: Այլ կերպ ասած, մենք հայ ենք ոչ թե այն պատճառով, որ մեզ հիմա ձեռնտու է հայ լինել, իսկ վաղը կարող ենք մտքներս փոխել և վրացի դառնալ, այլ որովհետև մի միասնական օրգանիզմի բջիջ ենք և չենք կարող չլինել: Մենք որևէ թշնամուց ավելի ենք ատում այն հայանուն իշխանավորին, ով չի կատարում իր զբաղեցրած դիրքից բխող ազգային պարտականությունները կամ դրանց հակառակ է գործում: Նմաններին «թուրքից բեթար» ենք կոչում:

Արտաքին աշխարհում ընտանիքը հանդես է գալիս որպես մեկ գործող անձ: Եղբայրները որքան էլ տանը կռվեն, փողոցում նրանք միմյանց պաշտպանելու են «արտաքին թշնամիներից»: Նույնիսկ երբ նրանցից մեկը մեղավոր է, անմեղ եղբայրը փողոցում կիսելու է նրա արածի պատասխանատվությունը: Բայց հետո տանը նա կարող է շատ ավելի խիստ պատժել եղբորը ոչ այնքան բուն արարքի, որքան իրենց ընտանիքի անդամին ոչ վայել պահվածքի համար: Նույնպես և օտարության մեջ. փողոցային կռվի դեպքում մարդ միշտ ուզում է պաշտպանել իր հայրենակցին՝ երբեմն նաև իրեն վտանգելով, նույնիսկ երբ վերջինս մեղավոր է: Միաժամանակ տեղի համայքները մեծ ցավ են ապրում, երբ որևէ մեկն իր անվայել վարքով արատավորում է հայի անունը:

Ինչպես ցանկացած օրգանիզմ՝ ընտանիքը կարող է հիվանդանալ, անդամալուծվել, նույնիսկ մահանալ, բայց կարող է նաև ներդաշնակորեն հարատևել: Նրա հավերժության երաշխիքն իր անդամների «առողջությունն» է, այսինքն՝ ընտանիքի իմաստը և սեփական դերը ճանաչելու, դրան համապատաս-

խանելու ունակությունը: Ընտանիքում միշտ առկա է հստակ դերաբաժանում, նույնիսկ երբ նրա անդամները չեն համապատասխանում իրենց դերերին: Ընտանիքը ղեկավար չի ընտրում, քվեարկություն չի իրականացնում, բայց բոլոր հարցերի վերաբերյալ լավ կամ վատ որոշումներ է կայացնում և գործադրում: Ընտանիքի անդամներն իրենց նպատակները համաձայնեցնելու կարիք չունեն, որովհետև դրանք բոլորն էլ բխում են ընտանիքի իմաստից և լրացնում են միմյանց:

Ընտանիքի այս մոդելը զգալի չափով աշխատում է համայնքային և ազգային կյանքում: Որպես հայ՝ մենք նույնպես կարող ենք քնած լինել, հիվանդանալ, նույնիսկ մահանալ (ֆիզիկական մահով նկատի չունենք), բայց քանի դեռ առողջ ենք, մեր արթուն պահերին կատարելու ենք հայություն կոչվող օրգանիզմում մեզ հատկացված դերը: Ընդ որում՝ սխալվելը նույնպես հիվանդության տեսակ է, երբեմն՝ շատ վարակիչ: Օրինակ, առաջնորդելու չարդարացված ձգտումը կամ կեղծ համեստությունը, գործելու տեղակ խոսելը կամ առանց անելիքն իմանալու գործելը: Ազգային ընդհանրության մեջ դերաբաժանումը նույնքան բնական է, որքան ընտանիքում: Առաջնորդները քվեարկությամբ չեն ընտրվում: Չկական մեխանիզմներով որոշումներ չեն կայացվում: Ամեն մարդ, սեփական դերին համապատասխան, ինքնուրույն է որոշում իր մասնակցության չափն ու ձևը: Ինչպես և ընտանիքում, ազգային շարժման մասնակիցների հետապնդած նպատակները միշտ փոխլրացնող են, նույնիսկ եթե մարտավարական ուղու ընտրության իմաստով հակառակ լինեն:

Անդամների մի մասին կորցրած ընտանիքը չի վերանում: Բավական է լինի մեկը, ով կպահպանի ընտանեկան օջախը: Այդպիսի ընտանիքը դեռ պահպանում է վերածնվելու ներուժը: Նույն է ազգի պարագայում: Ազգային համագործակցությունն ազգ-օրգանիզմի ոչ թե բոլոր, այլ միայն առողջ և արթուն բջիջների կողմից իրենց գործառույթները կատարելու վիճակն է: Այն տեղի է ունենում, նույնիսկ երբ այդ բջիջների թիվը խիստ սահմանափակ է: Այլ կերպ ասած, անպայման չէ, որ ազգային գործունեությունը համաժողովրդական լինի: Մի խումբ մարդկանց գործունեությունն էլ համազգային տարողություն կարող է ունենալ:

Մի խոսքով, գործունեության ընտանեկան և ազգային տեսակները շատ նման են և համագործակցային բնույթ ունեն: Արցախյան շարժման կամ երկրաշարժի օրերին այդպիսի օրինակները համատարած էին, որովհետև ճգնաժամային վիճակում ազգայինը շատերի մոտ էր արթնացել: Իսկ ինչպե՞ս այն արթուն պահել նաև ոչ ճգնաժամային օրերին: Սա արդեն լուրջ պետականաշինական խնդիր է:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ճգնաժամային պահերին, որպես կանոն, պետական համակարգը չի գործում: Այդ ժամանակ մարդկանց միավորում և կազմակերպում է ազգային պատասխանատվությունը: Արտակարգ իրավիճակներում պետական հաստատությունների դրսևորած կրավորականության ու անճկունության պայմաններում ծնվում են անպաշտոն առաջնորդներ և կամավորական շարժումներ: Այսինքն՝ համակարգի անգործության, պետության փաստացի չգոյության պայմաններում ազգային ընդհանրության բնական դրսևորումներն ավելի նպատակասլաց և համագործակցային են: Իսկ ահա պետական իշխանության ներքո, չգիտես ինչու, դրանք հիմնականում մրցակցային են: Հետևաբար՝ հարց է առաջանում, թե ինչու՞ է պետությունը խթանում մրցակցությունը, կամ, որ ավելի ճիշտ է, ինչպիսի՞ պետությունն է խթանում մրցակցությունը և ստվերում ազգային համագործակցությունը: Պետական համակարգում մրցակցություն ծնող ամենահզոր ազդակն իշխանությունն է: Քաղաքական մրցակցության գլխավոր շարժառիթն իշխանական լծակներին տիրապետելն է: Հետևաբար՝ հենց իշխանության արհեստական գաղափարն է, որ առաջին հերթին պետք է վերանա Չորրորդ հանրապետությունում:

Մյուս կարևոր հանգամանքն ազգային նպատակի առկայությունն է, որն ինքնակազմակերպող ազդեցություն է գործում ազգային հանրության վրա: Իսկ ահա մարդկանց մոտ այդպիսի նպատակի բացակայության, այսինքն՝ ազգային իմաստով անգործության պայմաններում առաջին դիրք են մղվում տարատեսակ հատվածական շահերը, ինչին էլ անմիջապես հետևում է մրցակցությունը: Հետևաբար՝ երկրորդ հարցն այն է, թե ինչո՞ւ պետությունը չի կարողանում սովորական (առօրյա), ոչ ճգնաժամային պայմաններում ապահովել ազգային նպատակի անընդհատությունն ու շարունակականությունը: Ինչպիսի՞ն պետք է լինի պետությունը, որպեսզի ժողովուրդը համախմբված կերպով հետևի ազգային նպատակներին: Այդ տեսակետից շատ կարևոր է, որ Չորրորդ հանրապետությունում ոչ մի կերպ չսահմանափակվի ազգային ինքնակառավարմանը մասնակցելու մարդկանց հնարավորությունը: Ավելին, ազգային որոշումների կայացումը ենթադրի կամավոր և պատասխանատու մասնակցություն:

Ժխտական ձևակերպումով խնդիրը կարելի է ներկայացնել որպես իշխանական մանդատի և բուրգի վերացում: Որոշակի իմաստով սա անիշխանություն է նշանակում, սակայն չպետք է նշանակի անկազմակերպվածություն: Ճիշտ հակառակը, ազգային իմաստով հենց մրցակցային պետությունն է, որ անկազմակերպ է և պառակտված: Ինչ-որ մեկի իշխանությունը միշտ նշանակում է մյուսի իշխանազրկություն, ենթակայություն, նույնիսկ եթե նրան համոզում են, թե ինքն իր կամքով և ընտրությունների միջոցով է իշխելու մանդատը փոխանցել իշխանավորին:

Անիշխանությունն այս դեպքում բոլորովին էլ վտանգավոր չէ, նույնիսկ օգտակար է, որովհետև ի տարբերություն խառնամբոխի, որին միայն ուժով կարելի է սանձել, ազգային ընդհանրությունները միշտ էլ ինքնակազմակերպման հատկություն ունեն, ինչը, սովորաբար, իշխանությունների կողմից ճնշվում է: Չորրորդ հանրապետությունը նկարագրելիս՝ մեր խնդիրն է գուշակել, թե ինչպիսին կլիներ հայոց ինքնակազմակերպումը, եթե մենք չլինեինք մրցակցային պետության «այլընտրանք չունեցող» գաղափարի ազդեցության ներքո:

Դրական իմաստով այս խնդիրը կարող է ունենալ մոտավորապես այսպիսի ձևակերպում: Յուրաքանչյուր հայ ազգային (նաև համայնքային) յուրաքանչյուր համակարգում կայացվող որոշումներին իրական մասնակցության հնարավորություն պետք է ունենա, սակայն բացի ազգային պատասխանատվությունից որևէ այլ պատճառով դրան մասնակցելու ցանկություն նրա մոտ չպետք է առաջանա: Այս սկզբունքը նախ նշանակում է, որ իշխանությունը պետք է զգալի չափով ապակենտրոնանա՝ դրա մի մասը համայնքային միավորներին (նկատի չունենք վարչատարածքային բաժանումը, որոնք

իրականում ոչ միշտ են համայնքներ) փոխանցելու միջոցով: Երկրորդ. իշխանական մանդատի մնացյալ՝ զուտ համազգային մասը, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնյաների նշանակման իրավունքը պետք է տարրալուծվի բավականաչափ ինքնավար ազգային հաստատությունների (բանակ, եկեղեցի, գիտությունների ակադեմիա, կենտրոնական բանկ և այլն) և համակարգերի (կրթություն, արդարադատություն, տնտեսություն և այլն) միջև: Երրորդ. ազգային հաստատություններում միանձնյա պատասխանատվությունը հնարավորինս պետք է փոխարինվի խմբային-ներկայացուցչականով, իսկ ընտրվող ավագ պաշտոնեության սերնդափոխությունը պետք է իրականանա աստիճանական մեխանիզմով և չընկալվի որպես իշխանափոխություն: Չորրորդ. ազգային որոշումներն ընդունված են համարվում, եթե ունեն համոզված գործադրողներ, և եթե ազգային գործունեության ինչ-որ հատվածի պատասխանատու հաստատություններից որևէ մեկը դրան չի առարկում:

Ապագայում «Ազատագրում»-ի էջերում ներկայացնելու ենք «Չորրորդ հանրապետություն» կոչված ազգային-պետական կազմակերպության տարբեր օղակների օրինակներ, որոնք կհամապատասխանեն հենց այս և նման այլ չափանիշներին:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»-ԻՆ

«Չորրորդ հանրապետություն» բառակապակցությունը մի քանի տարի է, ինչ շրջանառության մեջ է: Մարդիկ տարբեր իմաստներ են վերագրում այդ բառակապակցությանը և այն օգտագործում տարբեր նպատակներով: Վերջերս ընդդիմադիրների հավաքներից մեկում Չորրորդ հանրապետության մասին խոսեց նաև Վազգեն Մանուկյանը: Դժվար թե նա և իր գործընկերները գոնե մասամբ նկատի ունենային այն գաղափարները, որոնք մենք շարադրում ենք այս մշտական խորագրի ներքո: Այնուամենայնիվ, խոսքն ինքնին, անկախ այն արտաբերողից, ինչ-որ տեղեկություն իր մեջ կրում է: Եվ չնայած «Հայկական ժամանակ»-ի խմբագրականից ստորև մեջբերվող այս տողերը հասցեագրված են ընդդիմադիրներին, կարծում ենք՝ արժե, որ դրանց նաև մենք պատասխանենք:

«Չորրորդ հանրապետության գաղափարը, որ վերջերս առաջ քաշեցին մի շարք ընդդիմադիր քաղաքական ուժեր, միայն առաջին հայացքից է փրկության բանաձևի տպավորություն թողնում: Իհարկե, այդ տերմինը ավելի շատ խորհրդանշական բնույթ ունի, որ փորձ է արվում ներկայացնել որպես վերածննդի խորհրդանիշ, բայց նրա մեջ պարտվողականության բաղադրիչ կա, դասալքության էլեմենտ: Եվ երբ մենք՝ Երրորդ հանրապետության քաղաքացիներս, խոսում ենք Չորրորդ հանրապետության անհրաժեշտության մասին, ըստ էության, ընդունում ենք, ավելի ճիշտ՝ համակերպվում ենք այն մտքի հետ, որ ձախողվել ենք Երրորդ հանրապետության կերտման գործում, և որ ավելի սարսափելի է, ձերբազատվում ենք նրա ճակատագրի համար ունեցած պատասխանատվությունից: Չորրորդ հանրապետության գաղափարը շատ նման է «ծովից ծով Հայաստանի» գաղափարին, քանի որ վերջինիս պես, ըստ էության, հիմնված է այսօրվա Հայաստանի նկատմամբ տածած արհամարհանքի վրա»:

Իրոք, ընդդիմադիրների կողմից «Չորրորդ հանրապետություն»-ն օգտագործված է որպես փրկության բանաձև, որպես մի գեղեցիկ արտահայտություն, որն ինչ-որ էներգիա է պարունակում: Այն բավականին խորհրդավոր է և անորոշ: Ենթադրվում է, որ բոլորը կարող են պայքարել այդպիսի վերացական նպատակի համար, և միաժամանակ յուրաքանչյուրը կարող է դրա տակ իր ուզածը հասկանալ, երբեմն դա կարող է լինել իր կողքին կանգնածի ուզածի ճիշտ հակառակը:

Մեր պատկերացրած Չորրորդ հանրապետությունը չի նշանակում Երրորդի ձախողում կամ մերժում, այն Առաջինի, Երկրորդի և, իհարկե, Երրորդի տրամաբանական շարունակությունը, զարգացումն է լինելու: Չախողված կլինեինք, եթե Երրորդ հանրապետությունը գոյություն չունենար, կամ մեր ուզածը չլիներ: Բայց նա ճշտորեն համապատասխանում է իր հիմնադրման օրերին մեր՝ ժողովրդի սահմանած բոլոր ճշմարիտ կամ պարտադրված նպատակներին՝ անկախ ենք, Ղարաբաղը մերն է, բազմակուսակցական ենք, ամեն բան սեփականաշնորհված է (տես «Աննպատակ գոյության տասնամյակ» հոդվածը «Ազատագրում»-ի Ա համարում): Այնպես որ, պատասխանատվությունն էլ լիակատար է:

Իսկ ինչի՞ց ենք մենք այսօր դրժգոհ: Կամ Երրորդից գոհ ենք, բայց դժգոհ ենք անձերից: Այդ դեպքում իշխանափոխություն ենք ուզում: Կամ հիմնականում գոհ ենք Երրորդից, սակայն մի քիչ ուզում ենք այն բարեփոխել, կամ էլ համարում ենք, որ դեռ չենք ավարտել Երրորդի շինարարությունը: Սրանք էլ են պատասխանատու մոտեցումներ: Բայց հաճախ մեր դժգոհությունն ուղղված է լինում համակարգի հիմնային հասկացություններին: «Չորրորդ հանրապետություն»-ը հենց այն հարցադրումն է, որը մարդկանց ստիպում է մտածել համակարգային փոփոխություններ կատարելու ուղղությամբ: Այս վերջին մոտեցումն ավելի քան պատասխանատու է: Դասալիք կդառնայինք, եթե համակերպվեինք Երրորդի հետ, այն էլ երբ համոզված ենք, որ նրա հիմնարար սկզբունքները վերանայման կարիք ունեն:

Երրորդը մեծ հետք է թողել հայոց նորագույն պատմության մեջ, բայց ավարտել է իր առաքելությունը: Այն, ինչ կատարվում է այսօր ոչ միայն իշխանությունների, այլ բոլորիս կողմից, Երրորդի մերժումն է, և ընդհանրապես հայկական ծրագրի մերժումը: Չորրորդի գաղափարը կարող էր ծնվել անկախ և որոշ ժամանակ խաղաղված երկրում միայն: Լավ է, որ այսօր հայերը մտածում են ազգային ծրագրերի, իսկ Երրորդի քաղաքացիները՝ Չորրորդի մասին: Շատ ավելի վատ էր, երբ Առաջինը, Երկրորդը և Երրորդը հիմնվում էին ոչ թե մեր ծրագրով, այլ իրադարձությունների թելադրանքով: Երբ Չորրորդը կայանա, այն կլինի առաջին պետությունը, որ կկառուցվի հայի քաղաքական մտքի ճարտարապետությամբ:

Սակայն ասվածը հասցեագրված չէ նրանց, ովքեր կարծում են, թե մեր պետության ներկայիս տեսակը փոփոխության կարիք չունի, ովքեր սահմանափակվում են եվրահնտեգրացիոն բարեփոխումներով կամ իշխանափոխության պահանջներով միայն: Բազմակուսակցական ժողովրդավարության, շուկայական և տեղեկատվական համընդհանրացման, մարդու և տարատեսակ փոքրամասնությունների իրավունքների ջատագովների վերջին կանգառը Երրորդ հանրապետությունն է: Մինչդեռ մեր գնացքը շարունակում է իր ուղին:

ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՐՑԵՐԻՆ

«Ազատագրում»-ի խմբագրությունը սկսել է ստանալ իր հրապարակումների առաջին արձագանքները: Դրանց պատասխանները, ինչպես նաև ընդդիմախոսությունների մեկնաբանությունները կարող եք կարդալ «Պատասխանում ենք հարցերին» խորագրի ներքո:

«Ո՞ՐՆ Է ՉՈՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»

(«Ազատագրում», #Ա)

1. Մեզ ուրիշ պետություն պետք չէ, մեզ ուրիշ ժողովուրդ է պետք: Բոլոր կուսակցությունները հո դավաճաններ չեն: Նրանք պարզապես անհաղորդ են ճշմարտությանը:

-«Չորրորդ հանրապետություն» խորագրի ներքո ներկայացվող նյութերն առաջին հերթին վերաբերում են նոր պետությանը: Նոր ժողովրդի խնդիրն այստեղ դիտարկվում է միայն այն տեսակետից, թե ինչպես են պետական հաստատությունները ու օրենքները ազդում ժողովրդի որակի վրա: Հիմնական միտքն այն է, որ ներկայիս պետական համակարգն արհեստականորեն նպաստում է ժողովրդի պառակտվածությանը, նյութապաշտ և անբարո մթնոլորտին: Չորրորդ հանրապետությունը ներկայանում է որպես այլ տիպի պետություն, որը, ընդհակառակը, կնպաստի միասնությանը, հոգևորին, բարոյականությանը: Պարզ է՝ կա փակ շղթա. լավ ժողովուրդը կարող է ունենալ լավ պետություն, և լավ պետության օրոք է, որ կկայանա որակյալ ժողովուրդ: Այս փակ շղթայի մեջ ժողովրդի որակական աճն ինչ-որ կերպ պետք է դրսևորվի նաև պետականաշինության ոլորտում: Չորրորդ հանրապետության խնդրի սահմանումն ու լուծումը կարող են վկայել այդպիսի որակական աճի մասին: Այսօր մարդկանց հոգևոր որակների փոփոխությունը հանդես է գալիս որպես անհատական-ընտանեկան մակարդակի խնդիր: Ենթադրում ենք, որ այսօր էլ շատերը ձգտում են հոգևոր և բարոյական մաքրության: Բայց չմոռանանք, որ ընտանիքները գտնվում են շրջապատի, այդ թվում պետության որոշակի տեսակի բացասական ազդեցության ներքո: Մասնավորապես, ինչ որակ էլ մարդիկ ունենան, կուսակցական դառնալով՝ նրանք ստիպված են գործել համակարգի կանոններին համապատասխան: Առնվազն պարտավոր են դառնում պայքարել մյուս կուսակցությունների դեմ: Կուսակցականների, իշխանավորների, քաղաքական գործիչների, գործարարների, փաստաբանների, ոստիկանների և այլոց մարդկային որակի բարձրացման հնարավորությունները մեծապես սահմանափակ են պետության ներկա տեսակի պայմաններում:

2. Մի քիչ շատ է շեշտադրված ազգայինը, շատ տեղերում ավելի ճիշտ կլիներ նշել համամարդկայինը:

-Ազգայինի և համամարդկայինի հակադրություն իրականում գոյություն չունի: «Ազատագրում»-ի էջերում արծարծվում են բազմաթիվ խնդիրներ, որոնք իրականում համամարդկային նշանակություն ունեն: Ինչո՞ւ ենք դրանք ազգային խնդիրներ համարում: Նախ նկատել ենք, որ համամարդկային խնդիրների ազգային ընկալումները տարբեր են: Բացի այդ, ինչպես ազգային խնդիրներով կարող են զբաղվել անհատները կամ նրանց խմբերը, այնպես և համամարդկային խնդիրները, պետք է որ լուծվեն ազգային ջանքերի շնորհիվ: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ մարդկությունը կազմակերպված է որպես ազգերի թիմ: Այդ թիմում հայ ժողովրդի դերակատարությունը, եթե կուզեք՝ առաքելությունը ճանաչելն ու դրան համապատասխանելը նույնպես ազգային խնդիր է, այլ ոչ համամարդկային: Ավելին, այսօր արդյունավետ համամարդկային կազմակերպության բացակայությունը հանգեցնում է մի վիճակի, երբ ազգերի մասնակցությունը համամարդկայինին հնարավոր է միայն սեփական օրինակի միջոցով:

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՐԱՆՑՈՒՄ»

(«Ազատագրում», #Ա)

1. Այսպիսի հոդվածներն այս թերթի համար ավելորդ են:

-Ճիշտ է, «Ազատագրում»-ը դասական իմաստով քաղաքական թերթ չէ: Արդեն առաջին համարների բովանդակությունից պարզ է, որ Հայաստանի քաղաքական դաշտում առկա գրեթե բոլոր հարցադրումները մեր կողմից արհամարհված են: Սակայն դրանց մեծ տեղ են հատկացնում հեռուստատեսությունն ու թերթերը: Այդ պատճառով քաղաքական թեմաները շատերին, այդ թվում մեր համակիրներին կարևոր են թվում: Դժվար է խոսել ազգային խնդիրների մասին՝ շրջանցելով քաղաքականը: Որքան էլ վերջիններն անկարևոր լինեն, մենք չենք կարող կտրվել տեղեկատվական իրականությունից և խուսափել քաղաքական դիրքորոշումներից: Զուգահեռաբար անհրաժեշտ է բացահայտել քաղաքական հարցադրումների մեծ մասի անիմաստ լինելը:

«ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ»

(«Ազատագրում», #Բ)

1. Ձեր նկարագրած ազգային դպրոցն արդյոք անարխիայի չի՞ վերածվում: Ի՞նչ է նշանակում, թե ուսուցիչները դասավանդում են այն, ինչ ուզում են: Իսկ եթե նրանց շարքում եհովայի վկաներ լինեն:

-Այո, ուսուցիչները պետք է դասավանդեն այն, ինչն իրենք անհրաժեշտ են համարում, և դա բոլորովին էլ անիշխանություն չի նշանակում: Կրթության բնագավառում էլ ո՞ւմ պետք է պատկանի իշխանությունը, եթե ոչ ուսուցիչներին:

Ուսուցիչ ասելիս սովորաբար հասկացվում է դասատու, այն մարդը, որը միայն մատուցում է կրթական ծրագրով նախատեսված նյութը: Այս դեպքում մենք նկատի ունենք այն ուսուցչին, ով ինքնուրույն է գնահատում այդ պահին կրթության առջև կանգնած խնդիրները, որոշում է դրանց համապատասխանող առարկաների ցանկը, ծավալը, բովանդակությունը և մատուցման մեթոդը:

Մենք սովոր ենք, որ այս գործը երկրում վերապահված է միայն մեկին՝ նախարարին կամ նրա կողմից նշանակված պաշտոնյային: Եվ տպավորություն կա, թե այդ նախարարն անսխալական է, նվիրված է ազգին ու պետությանը և երբեք չի կատարում օտար պատվերներ: Մյուս կողմից բոլորս հակված ենք կասկածել, որ պետական հսկողությունից դուրս գտնվող անձինք անպայման ուզում են աշակերտներին վնաս հասցնել: Սակայն երկու ենթադրություններն էլ սխալ են: Այսօր պետական կրթական ծրագրերի մշակումը, համակարգային «բարեփոխումները» ֆինանսավորվում և ուղղորդվում են Համաշխարհային բանկի և նման այլ կազմակերպությունների կողմից: Իսկ աղանդավորական շարժումների համար պետական կրթական համակարգում ուղղակի ջերմոցային պայմաններ են ստեղծված:

Կրթական ծրագրերի, դրանք դասավանդող ուսուցիչների և նրանց կիրառած մեթոդների միջև ազատ ընտրության հնարավորությունը վերահսկողության բազմակողմանի մեխանիզմ է պարունակում: Այն իրականացնում են կրթության բոլոր պատվիրատուները՝ ծնողները, ուսանողները, գործատուները և, իհարկե, պետությունը: Միայն թե վերջինը մեկ տարբերակ առաջարկելու փոխարեն թույլ է տալիս ընտրություն կատարել բազմաթիվ տարբերակների միջև՝ ծայրահեղ դեպքերում իրեն իրավունք վերապահելով արգելել դրանցից մի քանիսը, ֆինանսապես խրախուսել կամ սահմանափակել ուրիշները:

Կարծում ենք, եթե բացառվի արտաքին թշնամական միջամտությունը, արգելման ենթակա դեպքերը իսկապես հազվադեպ կլինեն: Երբ որևէ մանկավարժ ինքնուրույն, առանց կողմնակի պարտադրանքի և սեփական համոզմունքներին համապատասխան է որոշում, թե ինչ գիտելիք և դաստիարակություն է անհրաժեշտ աշակերտներին, ապա նրա հիմնական շարժառիթն ազգային պատասխանատվության զգացումն է: Ուսուցիչներին, նաև ծնողներին ընտրության հնարավորություն տալով՝ պետությունը ստիպում է նրանց մասնակցել կրթության վերաբերյալ ազգային որոշումների կայացմանը: Իսկ այսօր հայերի այդ հսկա զանգվածն ազատ է որևէ պատասխանատվությունից, որովհետև հնարավորություն չունի մասնակցել կրթության պատվերի և առաջարկի ձևավորմանը: Ամենավատ բանը, որ կարող է պատահել ազատ ընտրության և ծրագրերի բազմազանության դեպքում, օտար ընդօրինակումների առատությունն է՝ սեփական մտքերը չունենալու պատճառով: Դա այսօր էլ առկա է Վալդորֆյան և նման այլ դպրոցներում: Սակայն եթե օտար ընդօրինակումը հատուկ նպատակային չի ֆինանսավորվում, ապա նրա համեմատությունը տեղական մեթոդների հետ կարող է և օգտակար լինել:

2. Ազգային կրթություն ասվածը ո՞րն է: Օրինակ, կենսաբանության ազգայինը ո՞րն է:

-Նախ, երբ մենք օգտագործում ենք ազգային դպրոց հասկացությունը, նկատի ունենք ոչ թե մատուցվող գիտելիքների ազգային բովանդակությունը, որը հակադրվում է ապազգայինին կամ համամարդկայինին, այլ կրթության ազգային համակարգը: Եթե քննադատական հայացքով նայենք ներկայիս պետական կրթության առանձին առարկաների՝ պատմության, գրականության բովանդակությանը, իհարկե, կարող ենք պնդել, թե դրանք կարող էին ավելի ազգային բովանդակություն ունենալ, ինչը, պարզ է, չենք կարող անել կենսաբանության կամ ֆիզիկայի պարագայում: Սակայն «Ազգային դպրոց» հոդվածի խնդիրն այլ էր. դրանում փորձ էր արվել ցույց տալ, որ պետական կրթական համակարգի կողքին առկա է ոչ մեկի կողմից չստեղծված մեկ այլ համակարգ, որը մենք անվանել ենք ազգային դպրոց: Այստեղ կան ծնողներ և աշակերտներ, որոնք գիտելիքներ են փնտրում հանուն գիտելիքի, այլ ոչ թե՝ պետական դիպլոմ ստանալու համար: Կան նաև ուսուցիչներ, ովքեր մատուցում են այնպիսի գիտելիքներ, որոնք հենց իրենք են անհրաժեշտ համարում, և ոչ թե մատուցում են պետական պարտադիր ծրագիրը, որի համար վարձատրվում են: Ազգային դպրոցը չի սահմանափակվում Հայաստանի պետական սահմաններով կամ կրթական հաստատությունների պատերով: Իրական ուսումնական գործընթացը հաճախ տեղի է ունենում երեկոյան ժամերին կամավորականության սկզբունքով: Այդպիսի աշխատանք իրականացնող ուսուցիչները, որպես կանոն, կրթության նկատմամբ ազգային պահանջն ավելի են հաշվի առնում, քան պետական պարտադիր ծրագիրը մատուցող դասատուները: Նրանք ավելի համարձակ ու ինքնավստահ են կրթական մեթոդների հարցում և նույնիսկ կենսաբանության նման «ոչ ազգային» առարկաների դասավանդման չափի և ձևի հարցերում ելնում են իրենց պատկերացրած ազգային անհրաժեշտությունից:

3. Ծրագրերի ազգային բովանդակությունն է կարևոր, իսկ դրա մասին բոլորովին չի խոսվում: Կարող ենք շատ լավ համակարգ ունենալ, բայց եթե դրա արդյունքում ներկայիս ապազգային ծրագրերը չեն փոխվելու, ապա համակարգի փոփոխությունն էլ անիմաստ է:

-Անշուշտ, որոշ առարկաների դեպքում ծրագրերի ազգային բովանդակությունը շատ կարևոր է: Մեկ ուրիշ առիթով միգուցե կանդրադառնանք առանձին ծրագրերի գաղափարական և արժեքային ուղղվածությանը: Մասնավորապես, կարևոր ասելիք կա պատմության դասագրքերում առկա բազմաթիվ անընդունելի դրվագների վերաբերյալ: Որոշ առարկաներ, գոնե ներկայիս բովանդակությամբ, ընդհանրապես չպետք է դասավանդվեն հայկական դպրոցում: Իսկ «Ազգային դպրոց» հոդվածում մենք միայն փորձել ենք բացահայտել այն հարցը, թե ինչո՞ւ ներկայիս կրթական համակարգն ազգային իմաստով չի բավարարում մեր պահանջներին, և թե ինչպես է պատահում, որ մեր երեխաներին մատուցում են ոչ պիտանի առարկաներ՝ ոչ պիտանի մեթոդներով և բովանդակությամբ:

«ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ»

(«Ազատագրում», #Բ)

1. Ազգի սահմանումը ճիշտ չի տրվում (ենթադրվում): Ազգը ոգի է, այլ ոչ թե ֆիզիկական մարդկանց համախումբ:

-Նախ, սահմանումները կարող են տարբեր լինել և համապատասխանել մատուցվող նյութին: Այս դեպքում մեր խնդիրն ազգը սահմանելը չէր, այլ նրան որպես գործող անձ դիտարկելը: Այլ առիթով մենք կարող ենք ազգը դիտարկել որպես հոգևոր աշխարհի երևույթ և այդ ժամանակ մենք կունենանք այլ սահմանում, նույնպես և այն դեպքում, եթե դիտարկենք որպես նյութական աշխարհի երևույթ: Վերջին դեպքում սովորաբար օգտագործվում է ժողովուրդ բառը:

Այս դեպքում նկատի ունենք ազգի՝ մեկ գործող անձ և ոչ թե բազմաթիվ մարդկանց (գործող անձանց) հավաքականություն լինելը: Եթե նույնիսկ օգտագործում ենք «հավաքական գործող անձ» հասկացությունը, ապա միայն ընդգծելու համար նրա տարբերությունն անհատ մարդուց, ֆիզիկական անձից: Ոգու գաղափարը նույնպես ընդգծում է ազգերի՝ մեկ գործող անձ լինելու հանգամանքը: Երբ ասում ենք՝ «ազգային ոգին ազատագրեց Արցախը», դա նույնն է, եթե ասենք՝ «հայ ազգ-գործող անձը ազատագրեց Արցախը», կամ երբ ասում ենք՝ «կամավորականները գործում էին ազգային ոգու թելադրանքով», նույնն է թե՝ «գործում էին ազգային պատասխանատվությունից ելնելով»: Այնպես որ, գրեթե բոլոր դեպքերում կարելի է հավասարության նշան դնել «ոգու» և «գործող անձի» միջև: Սակայն մենք չենք օգտագործում «ոգի» բառեզրը, քանի որ այն մի քիչ վերացական է հնչում, իսկ մեզ հաճախ պետք է լինում դիտարկել «գործող անձի» կազմակերպական ձևերը, այդ թվում՝ ազգային պետականաշինության խնդիրը: Փոքր-ինչ անսովոր է պետությունը ներկայացնել որպես «ազգային ոգու» կազմակերպական ձև, թեև կարելի է: Մյուս կողմից սխալ է, երբ պետությունը համարվում է սոսկ նյութական աշխարհի երևույթ, որովհետև այն մտածող և գործող կառույց է: Պետությունը, եթե այն իսկապես ազգային է, կարող է և պետք է կատարի ազգային ոգու դրսևորման կառույցի իր առաքելությունը: Սակայն այս միտքն ավելի հասկանալի է թվում, երբ «ոգու» փոխարեն օգտագործում ես «հավաքական գործող անձ» հասկացությունը:

2. Համաձայն չենք, որ ազգային շարժումներն անհատների կամքից աննշան կախվածություն ունեն: Առանց մարդկանց նախաձեռնության ոչինչ էլ տեղի չի ունենում:

-Ճիշտ է, որ ցանկացած շարժում իրողություն է դառնում մարդկանց, գործիչների, առաջնորդների կատարած քայլերի արդյունքում: Սակայն ինչո՞ւ են այդ մարդիկ շարժում նախաձեռնում կամ առաջնորդում այն, ինչո՞ւ են արձագանքում այս կամ այն կոչին, իսկ մյուսները՝ մատնում անտարբերության: Նրանք դա անում են, որովհետև շարժումը հասունացել է: Այսինքն՝ նախաձեռնողը պետք է համոզված լինի, որ իր կոչն արձագանք կստանա, այլապես կոչով հանդես գալն անիմաստ է:

Ճիշտ պահին հնչած ճիշտ կոչին մարդիկ սպասում են, թեկուզ նրանցից քչերը կարող են բառերով ձևակերպել իրենց ուզածը: Եթե չլինի մարդկանց այդ սպասումը, անհնար կլինի որևէ բան նախաձեռնել և առաջնորդել: Հետևաբար՝ նախաձեռնողներն իրենց քմահաճույքով չեն շարժումներ առաջացնում: Այս իմաստով առանձին անհատների հավակնությունները չափազանցված են: Փոխարենը, նրանց վերապահված է մի շատ կարևոր առաքելություն՝ ճանաչել ազգային ընթացքը, գնահատել պահը և հայտարարել հերթական ազգային նպատակը: Ընդ որում՝ այն չի կարող կամայական լինել և պետք է բխի ազգային ընթացքի տրամաբանությունից ու պատմական պահի հանգամանքներից:

Առաջնորդելու հավակնություն ունեցող գործիչների համար անչափ կարևոր է այդ նպատակները ճիշտ կռահելը: Հենց կռահելն է նրանց պարտականությունը, այլ ոչ թե կամայական որոշելը: Ցավոք, շատերը փորձում են գնալ նպատակները որոշելու ճանապարհով և բավարար ճիգ չեն գործադրում՝ ազգային ընթացքի տվյալ փուլի պարագաները հասկանալու ուղղությամբ: Դա է մեր օրերում բազմաթիվ անպտուղ նախաձեռնությունների ի հայտ գալու պատճառը: Նրանք պետք է հասկանան, որ իրենք գործընթացի տերերը չեն, այլ, լավագույն դեպքում, ընդամենը մասնակիցները: Ասում ենք՝ լավագույն դեպքում, որովհետև սխալ, ազգային ընթացքից չբխող գործերի պատճառով մարդիկ իրենք իրենց զրկում են ազգային կյանքին մասնակցելու հնարավորությունից, իսկ հաճախ էլ նրանց գործերը հակազգային բնույթ են ստանում:

Վատ բան չկա այն գիտակցության մեջ, որ մենք ոչինչ չենք որոշում հայ ժողովրդի կյանքում: Փոխարենը, մենք և միայն մենք ենք որոշում հայ ազգի գործերին մեր մասնակցության ձևը, չափը, ուղղությունը, ստանձնած պատասխանատվությունը: Եվ սա ոչ մի կերպ չի հակասում այն իրողությանը, որ հայության բոլոր գործերը տեղի են ունենում առանձին հայերի կատարած քայլերի միջոցով:

3. Շահ կա բոլոր գործողություններում, և դա անպայման չէ, որ նյութական լինի:

-«Շահ» հասկացությունը նույնպես կարող է տարատեսակ սահմանումներ ունենալ: Երբ մենք օգտագործում ենք «անշահախնդիր» բառը, ապա նկատի ունենք, որ անձը սեփական շահերը չի հետապնդում, այլ գործում է հանուն ուրիշների: Բայց մեկ այլ դեպքում հանուն ուրիշների գործելը նույնպես կարող ենք շահ համարել: Այսինքն՝ շահն այն է, ինչ անձն ուզում է անել՝ անկախ նրանից՝ իր համար է անում, թե ուրիշների: Ավելի ընդունելի ենք համարում առաջին սահմանումը, այդ պատճառով էլ հոդվածում փորձել ենք տարբերակել հանուն սեփական կարիքների, հաճույքների և կրքերի կատարվող գործողություններն այն գործողություններից, որոնք թելադրված են պարտքի և պատասխանատվության զգացումից: Այս տեսակետից դժվար է շահ համարել, օրինակ, հայրենասիրությունը: Մյուս սահմանումն ընդունելի չէ նաև այն պատճառով, որ այն հաճախ օգտագործվում է՝ քողարկելու համար մարդու նյութական շահերի անբարո բնույթը: Արևմտյան արժեքային համակարգում շատ բնական է համարվում նյութական շահերով առաջնորդվելը: Սակայն, օրինակ, անանուն բարեգործությամբ զբաղվելն անշահախնդիր երևույթ է: Որպեսզի դրա ֆոնի վրա շահադիտական նպատակներն ավելի անբարո չթվան, կապիտալիզմի գաղափարախոսները հնարեցին «հոգեկան բավարարվածություն» արտահայտություն: Հենց դա էլ համարվեց անշահախնդիր բարեգործի շահը:

ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆ

Բազմակարծություն կամ պլյուրալիզմ. այսպես է կոչվում արևմտյան «արժեքներից» մեկը, որին որոշել ենք անդրադառնալ մեր յուրօրինակ բառարանում: Այն արդեն հասցրել է իր խոր արմատները ձգել հանրային մտածողության մեջ և այսօր հիմնականում ընկալվում է որպես շատ բնական և ակնհայտ դրական երևույթ: Սա տեսականորեն: Իսկ գործնականում «կարծիքներ արտահայտելու ազատությունը» բոլորիս նյարդայնացնում է: Մարդիկ ազգի առաջնորդներից ճշմարիտ խոսք են սպասում, բայց փոխարենը տեսնում են համատարած փոխադարձ քննադատություն: Անչափահաս զավակները հայրական խոսքին հակադրում են իրենց «հեղինակավոր» կարծիքը: Անգամ աշակերտ լինելու արժանիք չունեցողներն ուսուցիչներին դաս տալու սովորություն են ձեռք բերել: Խոսողները շատ են, իսկ լսողները՝ քիչ: Խոսում են՝ ոչինչ չասելով: Խոսում են՝ միայն իրենց խոսելու իրավունքը հաստատելու համար: Թուքակի պես սերտած հիմարությունները մատուցում են որպես սեփական համոզմունք: Մարդիկ հուսահատված ճշմարտություն են փնտրում ու չեն գտնում:

Իհարկե, յուրաքանչյուր մարդ կարող է սեփական կարծիքն ունենալ և ազատորեն այն արտահայտել: Ոչ ոք ոչ մեկի լեզուն չի բռնում: Ճիշտ է նաև այն, որ մարդիկ չպետք է հալածվեն՝ իշխող տեսակետից տարբերվող, նույնիսկ ակնհայտ կեղծ մտքեր արտահայտելու համար: Եվ բոլորովին կարևոր չէ, թե արդյոք դա ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հռչակագրում, թե ոչ: Բայց մի՞թե ճիշտ է, երբ սեփական կարծիք ունենալու իրավունքը կուռքի են վերածում: Մի՞թե լավ է, երբ մարդիկ հուսահատության աստիճան ապակողմնորոշված են և չեն կարողանում սուտը ճշմարիտից զանազանել: Եվ վերջապես, եթե բազմակարծությունն այդքան բնական վիճակ է, ապա ինչի՞ համար են աշխարհով մեկ դրա պաշտպանությանն ուղղված տիտանական ջանքերը:

Բանն այն է, որ բազմակարծությունը շատ ազդեցիկ մի զենք է մարդկության դեմ ծավալված ներկայիս տեղեկատվական-հոգեբանական պատերազմում: Դրա միջոցով է, որ ժողովուրդները վերածվում են հեշտությամբ կառավարելի զանգվածների: Այստեղ տեղին է հիշել «Սիոնի իմաստունների արձանագրություններ»-ի հետևյալ տողերը. **«Հանրային կարծիքը մեր ձեռքն առնելու համար պետք է այն անշարժության դատապարտենք՝ զանազան ուղղություններից այնքան շատ և այնքան տևականորեն հակասական կարծիքներ հայտնելով, որ քրիստոնյաները, ի վերջո, մոլորվեն այս լաբիրինթոսում և հասկանան, որ հազար անգամ նախընտրելի է, որ մարդն ընդհանրապես կարծիք չունենա քաղաքական հարցերում: Սա է երջանկորեն կառավարելու առաջին գաղտնիքը»:**

Բազմակարծության էությունը միաժամանակ բազմաթիվ «ճշմարտություններին» գոյության հավասար իրավունք տալն է: Առօրյա կյանքում բոլորին պարզ է, որ ճշմարտությունը մեկն է. մածունը սպիտակ է և սև լինել չի կարող: Սակայն երբ խնդիրը տեղափոխվում է քաղաքական կամ բարոյական հարցերի հարթություն, ճշմարտությունը տարբեր մարդկանց կողմից տարբեր չափով ու տարբեր կերպ է ընկալվում կամ մեկնաբանվում: Հենց այս փաստն էլ չարաշահվում է բազմակարծության կողմնակիցների կողմից:

Մարդկային միտքը չի կարող միանգամից թափանցել ճշմարտության խորքերը, մի հայացքով ընդգրկել նրա բազմաշերտ ամբողջությունը: Բայց միակ ճշմարիտը ճանաչելու խնդիրը միշտ կանգնած է եղել մարդկության առջև: Բազմակարծությունը շեղում է մեզ այդ խնդրից: Այն հայտարարում է, որ չկա միակ ճշմարտություն, այլ կան միայն կարծիքներ, որոնք բոլորն էլ ճշմարտություններ են դրանք արտահայտողների համար: Հետևաբար՝ կարիք չկա, որ մարդիկ միմյանց համոզեն, թող բոլորը մնան իրենց կարծիքին, թող բոլորը հաղթեն բանավեճում: Սակայն արդյունքում բոլորն էլ պարտվում են, որովհետև հեռանում են ճշմարտությունից:

Բազմակարծության պայմաններում մեծ տարածում են ստանում գեղեցիկ փաթեթավորված ճշմարտության աղավաղումները, կիսաճշմարտությունը և ճշմարտանման սուտը: Բավական է փոխել ընդամենը մեկ տարր, ակնհայտ ճշմարիտ փաստերի և դատողությունների արանքում քողարկել մի կեղծ փաստարկ, և դա այլևս ճշմարտություն չէ:

«Պատերազմը վատ է», «տնտեսական զարգացումը լավ է», «շրջափակումը խանգարում է տնտեսական զարգացմանը», «խաղաղության համար փոխզիջում է անհրաժեշտ», հետևաբար՝ «որպեսզի լավ ապրենք, պետք է զիջումների գնանք»: Սրանք դատողություններ են, որոնք ճշմարիտ են թվում: Զրկանքների մեջ ապրող մարդը կարող է և հավատալ, որ պատերազմի ենթադրյալ ավարտը կնպաստի իր բարեկեցությանը: Սակայն բոլոր այս դատողությունները որոշակի կեղծիք են պարունակում: Չէ՞ որ այսօր պատերազմ չկա, ենթադրվող փոխզիջումներն իրականում միակողմանի են, շրջափակումն էլ ոչ թե վնասում, այլ օգնում է մեզ չձուլվել թուրքական շուկային, իսկ աբխազական երկաթուղու աշխատանքն ադրբեջանական շրջափակման հետ ոչ մի կապ չունի, չշրջափակված մեր հարևաններն էլ մեզնից տնտեսապես ավելի զարգացած չեն, և, վերջապես, զիջումները կարող են խախտել ուժերի հավասարակշռությունը և նոր պատերազմի պատճառ դառնալ:

Քաղաքական հարցերում բազմակարծությունն առաջ է քաշում նաև նպատակների բազմազանության գաղափարը: Նա մերժում է միասնական ազգային նպատակը՝ փոխարինելով այն կուսակցական, դասակարգային և այլ հատվածական նպատակներով: Նպատակներ, որոնք երբեք բոլորինը դառնալ չեն կարող: Մարդիկ շարունակում են մոլորված մնալ սոցիալիզմի և լիբերալիզմի, կոսմոպոլիտիզմի և նացիոնալիզմի միջև: Փորձելով քաղաքակիրթ երևալ՝ նրանք որդեգրում են «իզմ»-երից մեկը՝ վերջինի տակ քողարկելով իրենց հատվածական շահերը: Այսպիսով, բազմակարծությունը որդեգրած հանրությունն իրեն դատապարտում է քայքայման, պառակտման և ոչինչ չանելուն, որովհետև որևէ քայլ, ավելին՝ միասնական որևէ քայլ անելու համար անհրաժեշտ է մեկ կարծիք, մեկ նպատակ և մեկ ճշմարտություն ունենալ: Միակ ճշմարիտի հանդեպ ունեցած հավատն է, որ մեզ գործելու հնարավորություն է ընձեռելու: Այս պարզ ճշմարտությունը շարունակում են վիճարկել բոլոր այն գավառամիտները, ովքեր իրենց «քաղաքացիական հասարակության» անդամ են համարում և գովերգում են բազմակարծությունը:

ՍԱՄՈՒԼԻ ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԼՈԿԸ ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒՄ ԿՎԱՌԵՆՔ

Սերժ Սարգսյանի նախագահ դառնալու ճանապարհին լուրջ դժվարություններ կարող էր ստեղծել գազի գնի, դրանից ածանցվող սպառողական ապրանքների գների էական թանկացումը: Եվ նա ավելի լավ ոչինչ չգտավ, քան Հրազդանի ՋԷԿ-ի հինգերորդ բլոկը և Իրան-Հայաստան գազամուղը Ռուսաստանին նվիրելը: Մարտի վերջին այդ մասին վկայող տեղեկատվություն տարածվեց մամուլում:

Հայաստանը և Ռուսաստանը կնքել են մի գործարք, ըստ որի՝ ՋԷԿ-ի 5-րդ բլոկը ռուսական «Գազպրոմ»-ին պետք է վաճառվի 250 միլիոն դոլարով: Սակայն 250 միլիոնը Հայաստանին տրվելու է փոքրիկ մասերով և գազի տեսքով այնքան, որ բնակչությանը վաճառվող գազի գինը չթանկանա: Փաստորեն, մենք 2-3 տարում վառելու ենք մի քանի հարյուր միլիոն արժեցող Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկը:

Ամեն բան կարող էր բոլորովին այլ կերպ դասավորվել, եթե իշխանությունները հավատարիմ մնային Իրանի հետ ձեռք բերված համաձայնությանը, ըստ որի՝ նույն Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկի շինարարությունն ավարտելու համար Իրանը Հայաստանին 150 միլիոն դոլարի վարկ էր տրամադրում, որը Հայաստանը պետք է մարեր աստիճանաբար, նույն այդ բլոկի արտադրած էլեկտրաէներգիայի կեսի տեսքով, իսկ մյուս կեսը կարող էր վաճառել: 2 տարի անց պարտքը կփակվեր, և Հայաստանը կունենար բյուջեին բազմամիլիոն եկամուտ ապահովող էներգաբլոկ: Փաստորեն, Հայաստանին շատ ձեռնտու այս գործարքը զոհ գնաց Ս. Սարգսյանի իշխանական հավակնություններին: Սրանով Հայաստանի իշխանությունները մեծ վնաս են հասցնում Իրանի՝ օրեցօր աճող տնտեսությանը, որը էլեկտրաէներգիայի մեծ պահանջ ունի: Մինչդեռ հարևան երկիրը բազմիցս ապացուցել է իր բարեկամական վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ: Նրա առաջարկած տարբերակը, ի տարբերություն ռուսականի, նույնպես բարեկամի առաջարկ էր: Սրանով իշխող վարչախումբը հաճոյանում է ոչ միայն Ռուսաստանին, այլև՝ ԱՄՆ-ին:

Ի դեպ, նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնից հայ-իրանական համագործակցության ջատագով Արտաշես Թումանյանի հեռացման պատճառը, ըստ ամենայնի, նրա պարտությունն էր ռուսական կողմնորոշում ունեցող և ամերիկացիներին սիրաշահել փորձող Սերժ Սարգսյանից:

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԴԵՄ ՉԷՐ

Վերջերս ականատես եղանք, թե ինչպես իսլամական աշխարհը հակազդեց արևմտյան մամուլում Մուհամմեդ մարգարեի ծաղրանկարների հրապարակմանը: Ցուցարարները հիմնականում հարձակումներ էին գործում Եվրամիության երկրների ներկայացուցչությունների վրա:

Ոմանք շտապեցին դա որակել որպես հակաքրիստոնեական պայքար: Նման որակումներ եղան նույնիսկ հայկական մամուլում: Իրականում մահմեդականներն ընդգծում էին, որ իրենց բողոքն ունի բոլորովին այլ հասցեատեր: Մասնավորապես, Իրանի խոշորագույն թերթերից մեկը միջազգային մրցույթ կազմակերպեց ոչ թե քրիստոնեական, այլ եբրայեցիների Հոլոքոսթի թեմայով: Թերթի ներկայացուցիչների խոսքերով, եթե Արևմուտքի մամուլում սրբակեղծ նկարների հրապարակումն արդարացվում է խոսքի և ինքնարտահայտման ազատությամբ, ապա եկեք տեսնենք՝ նրանք իրո՞ք պատրաստ են հետևել հռչակված սկզբունքներին և հրապարակել ծաղրանկարներ Հոլոքոսթի թեմայով:

Ավելի ուշ Իրանի արտգործնախարար Մանուչեհր Մոթթաքին «սուտ» որակեց ԱՄՆ պետքարտուղար «խանում Քոնդոլիզա Ռայսի» հայտարարությունն այն մասին, որ ծաղրանկարների շուրջ ստեղծված իրավիճակը Թեհրանն օգտագործում է՝ իսլամական աշխարհում հակա-քրիստոնեական տրամադրություններ հրահրելու համար:

Իսկ երբ ադրբեջանական «Ենի խաբար» շաբաթաթերթը հրապարակեց մի հոդված, որում վիրավորական արտահայտություններ կային Հիսուսի և սուրբ կույս Մարիամի հասցեին, ապա Բաքվում Իրանի դեսպանատունը հանդես եկավ խիստ դատապարտող հայտարարությամբ՝ ասելով, թե դա արել են՝ Ղուրանում սուրբ կույս Մարիամի մասին սուրահին անտեղյակ մարդիկ իսլամի և քրիստոնեության հետևորդների միջև թշնամություն հրահրելու նպատակով»:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Հայաստանի ազգային անվտանգության փաստաթղթի լրամշակված տարբերակն ուղարկվելու է փորձաքննության ՌԴ նախագահին կից ակադեմիայի մասնագիտական խորհուրդ և ԱՄՆ ազգային ռազմական համալսարանի գիտական խորհուրդ: Այս տարօրինակ հայտարարությունն արել է Սերժ Սարգսյանը և ավելացրել, որ «փաստաթուղթը մշակելիս հաշվի են առնվել տարբեր երկրների՝ թե ԱՄՆ-ի, թե Ռուսաստանի, թե մերձբալթյան երկրների փորձը»: Այդքանից հետո էլ դեռ պնդել է, որ հայեցակարգը լինելու է «ազգային փաստաթուղթ, որը, իհարկե, չի կարող խախտել միջազգային ընդունված չափանիշները»: Ինչպե՞ս կարող է ազգային անվտանգությունը համապատասխանեցվել ինչ-որ միջազգային չափանիշների, եթե այն պետք է մեզ պաշտպանի հենց միջազգային վտանգներից: Կամ ի՞նչ կապ ունի մերձբալթյան երկրների փորձը: Գուցե մեր պաշտոնյաների կարծիքով այդ երկրները ևս թուրքերով են շրջապատված, կտրված են ծովից, երկաթգիծ չունեն, բնակչությունն էլ արտագաղթում է:

Բացի այս, վերջերս նաև պարզվեց, որ ԱՄՆ-ի պաշտպանության դեպարտամենտի մասնագետներն ուսումնասիրել են հայկական բանակի մասնագիտական մակարդակը և նույնիսկ բարձր գնահատել այն: Այստեղից մի ուրիշ հարց է ծագում. ԱՄՆ-ի՝ մինչև ատամները զինված և վարձկաններով համալրված, համաշխարհային ժանդարմի դերը ստանձնած բանակի մասնագետներն ի՞նչ չափանիշներով են գնահատում մեր բանակի մակարդակը, որը համեմատելի չէ ամերիկյանին ո՛չ սպառազինությամբ և ֆինանսավորմամբ, ո՛չ էլ իր առջև դրված խնդիրներով և մարտիկներից պահանջվող որակներով:

Այս ամենը վկայում է, որ Հայաստանի պաշտպանական և անվտանգության համակարգերն այսօր խեղված են և բոլորովին չեն համապատասխանում հայ ժողովրդին ուղղված մարտահրավերներին: Ավելին, դրանց պատասխանատուները հետևողականորեն փորձում են մեր պաշտպանական և անվտանգության կառույցները վերածել ամերիկյան անվտանգության համակարգի տեղական կցորդների:

ՄԻՇՏ ՀԱՄԱՐԵԼ ԵՄ, ՈՐ ՆԱԽ ԱՊՐԱՆՔԻ ԵՄ, ՀԵՏՈ ՄԻԱՅՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ . . .

Նման հետաքրքիր հայտարարություն է արել պատգամավոր Նապոլեոն Ազիզյանը:

«Ամեն թռչուն իր երամի հետ է թռչում,- մանրամասնում է նա:- Ես ծնունդով ապարանցի եմ ու այսուհետև միայն ապարանցիների հետ եմ լինելու: Կյանքում որևէ բան շատ դժվար եմ փոխում: Մի կուսակցության՝ «Ազգային միաբանության» անդամ արդեն եղել եմ ու էլ երբեք չեմ անդամակցի որևէ կուսակցության»:

Պարոն Ազիզյանի ինքնության փնտրտուքում կա երկու հանգամանք՝ մեկը լավ, մյուսը վատ:

Լավն այն է, որ պատգամավորը հասկացել է, որ կուսակցություններին

անդամակցելը վատ է, որ կյանքում կան ավելի հաստատուն բաներ, ինչպիսին՝ ապարանցի լինելն է: Սակայն վատն էլ այն է, որ նա և նրա նմանները նույնիսկ ապարանցիությունն են վերածում կուսակցության: Պարոն Ազիզյանն իր ապարանցիությունը հիշել է այն դեպքում, երբ պետք է որ հիշեր իր հայ լինելը:

Մենք, փաստորեն, կանգնած ենք մի սարսափելի պառակտման շեմին: Հայաստանի համայնքների ներկայացուցիչները, որ տարբեր ժամանակներում լքել են իրենց փոքր հայրենիքները, այսօր Երևանում կազմավորվում են որպես Նիգ-Ապարան, Հզոր Հայրենիք, ղարաբաղցիների կլան, սյունեցիների կլան և այլ փոքր ու մեծ խմբավորումների ձևով: Առանձին գործիչներ, շահագործելով համայնքային համերաշխությունը, դրանք վերածում են կուսակցական թայֆաների: Փոխանակ շենացնելու իրենց Ապարանը, Ջավախքը, Սյունիքն ու մյուս երկրամասերը՝ նրանք բոլորը պատրաստվում են մասնակցել հանուն իշխանության ընթացող գզվռտոցին:

ԻՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի մամուլում անհեթեթ արձագանքի էր արժանացել Բաքվում Իրանի դեսպանի արած հայտարարությունն Ադրբեջանի ամբողջականությունը վերականգնելու մասին: «Տեսեք, Իրանն էլ է Ադրբեջանի կողմից»,- անմիջապես արձագանքեցին տեղացի արևմտամետները: Իսկ ի՞նչ էր եղել իրականում:

«Ռեգնում» գործակալությունը տարածել էր մի հաղորդագրություն, որում ներկայացվում էր ԻԻՀ դեսպանի հանդիպումն ադրբեջանցի ուսանողության հետ: Երիտասարդներն իրանական Ատրպատականի վերաբերյալ «սուր» հարցեր են ուղղել դեսպանին: Մասնավորապես, ուսանողներից մեկը հարցրել է, թե ինչու է Իրանը կիսել Ադրբեջանը: Դեսպանն էլ նախ պատմել է, որ դա տեղի է ունեցել ռուս-պարսկական երկու պատերազմների ընթացքում, որտեղ Իրանը տարածքային կորուստներ է ունեցել, իսկ հետո ավելացրել է, որ եթե համապատասխան դիմում լինի, Իրանը կարող է և «վերականգնել» Ադրբեջանի ամբողջականությունը, այսինքն՝ ներկայիս Ադրբեջան պետության տարածքը նույնպես կմիացնի Իրանին: Եվ պատկերացրեք, որ Հայաստանում գտնվել են մարդիկ, որ Ադրբեջանի ամբողջականության այսպիսի «վերականգնումը» հասկացել են Ղարաբաղյան հակամարտության համատեքստում:

Իրանի ադրբեջանցիների խնդրով մտահոգ են ոչ միայն Բաքվի ուսանողները: Վերջերս տեղի ունեցավ Ադրբեջանցիների համաշխարհային վեհաժողովը, որը նույնպես բարձրացրեց Իրանի հյուսիսում ապրող ադրբեջանցիների հարցը: ԻԻՀ-ի դեմ նախապատրաստվող պատերազմում ԱՄՆ-ը մեծ հույսեր է կապում Իրանի «ադրբեջանական» ընդդիմության հետ, որին վերապահված է հինգերորդ շարասյան դերը: ԱՄՆ-ը նաև հույս ունի Իրանի դեմ օգտագործել Ադրբեջան պետության տարածքները: Եվ ուրեմն, բոլորովին էլ պետք չէ բացառել, որ Իրանն իր անվտանգության նկատառումներով մի օր իսկապես ուզենա վերականգնել Ադրբեջանի ամբողջականությունը՝ իր պատկերացրած ձևով:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՓՆՏՐՈՒՔ

Արդեն 2006թ. Եվրոպական դատարանը վճիռներ կկայացնի Հայաստանի Հանրապետության վերաբերյալ: Սեփական երկրում արդարության հասնելու հույսը կորցրած հարյուրավոր քաղաքացիներ արդեն դիմել են օտար այդ դատարանի օգնությանը: Գործերը, որ պետք է քննվեն այնտեղ, ունեն մոտավորապես այսպիսի անուններ՝ «Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության», այսինքն՝ հայն ընդդեմ հայի պետության: Անկախ նրանից, թե ովքեր են կոնկրետ մեղավորները, երևույթը, ընդհանուր առմամբ, խայտառակություն է: Ճիշտ է, որ այսօր Հայաստանում հաստատված պետական կարգն էությամբ հայկական չէ: Նրանում մարդիկ հաճախ նույնքան անարգված են, որքան օտար տիրապետությունների օրոք: Նաև սա է պատճառը, որ արդարություն փնտրող հայերը նույնպես պետության դեմ Հաագայից «տղա կանչելը» բնական են համարում:

ՀՀ դատավորներին այս երևույթը չի հուզում: Նրանք ավելի շատ մտահոգված են իրենց աշխատավարձով: ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Հովհաննես Մանուկյանը վերջերս կարծիք հայտնեց, թե դատական կոռուպցիան արմատախիլ անելու ճանապարհին թիվ մեկ քայլը դատավորների աշխատավարձերը բարձրացնելն է: Բայց Հայաստանում դատավորների աշխատավարձերն առանց այդ էլ շատ բարձր են: Եթե անգամ այս պայմաններում կաշառակերությունը չի նվազում, ապա ակնհայտ է, որ խնդրի լուծումը պետք է ուրիշ տեղ փնտրել: Արևելքում, օրինակ, դերվիշները, թափառաշրջիկ և մուրացկան լինելով հանդերձ, հայտնի էին որպես միջնորդ դատավորներ, ընդ որում՝ արդար: Մարդիկ հենց նրանց էին դիմում՝ իրենց միջև ծագած վեճերը լուծելու համար: Այնպես որ, աշխատավարձը չէ կարևորը, այլ՝ ժամանակակից դատական մշակույթում առկա մի շարք սկզբունքները: Մասնավորապես այն մեկը, որը դատավորից պահանջում է շահագրգիռ կողմ չլինել՝ անաչառ որոշում կայացնել կարողանալու համար: Այնինչ հենց հակառակն է ճիշտը: Երկու եղբայրների վեճին առավել արդար լուծում կարող է տալ երրորդ եղբայրը, այլ ոչ թե պատահական մի անցորդ: Հետևաբար, դատավորը պետք է շահագրգիռ լինի համայնքում արդարություն և խաղաղություն հաստատելու գործում, այլ ոչ թե անտարբերությամբ և ձևականորեն կիրառի օրենքի տառը:

ԲԵԼԱՌՈՒՍԻ ԴԱՍԸ

Լուկաշենկոն Բելառուսում երրորդ անգամ նախագահ ընտրվեց: Հավանաբար, դա էր պատճառը, որ ԱՄՆ-ը, ԵԱՀԿ-ն և Եվրամիությունը չճանաչեցին նրա ընտրությունը, քանզի նույնիսկ տեղական ընդդիմադիրները խոստովանում են, որ նա հաղթել է: Ամեն դեպքում նրանք ձևացրին, թե վիճարկում են արդյունքները, որպեսզի արդարացնեն Արևմուտքից ստացված ֆինանսական և կազմակերպական օժանդակությունը:

Հայ արևմտամետներին խիստ ցնցել է հատկապես ԱՄՆ-ի «չճանաչելը»: Նրանք չեն հասկանում, թե այդ ինչպես է պատահում, որ «Քոչարյանը չի ընտրվում՝ ճանաչում են, իսկ Լուկաշենկոն ընտրվում է՝ չեն ճանաչում»: Բայց այս ցնցումն օգտակար էր, որովհետև մեր արևմտամետները սկսել են հասկանալ, որ իրականում ԱՄՆ-ը ոչ մի սկզբունք էլ չունի, որ պաշտպանի, առավել ևս՝ ժողովրդավարությունը: Նա միշտ էլ «նախընտրում է գործ ունենալ իշխանությունների հետ, եթե վերջինները կատարում են իր ուզածները»: Իսկ «Հայաստանի իշխանությունները Լուկաշենկոյի պես «ախմախ չեն», որ չկատարեն նրա ուզածները, մանավանդ որ դրանք բոլորը շռայլորեն ֆինանսավորվում են»: Մեր իշխանությունները միշտ էլ նախընտրել են «սեփական շրջապատի ջահելներից «էնջիօներ» սարքել, որպեսզի ամերիկյան փողերն ընդդիմությանը չմնան»:

Իր էջերում նման եզրակացություններ է արել «Հայկական ժամանակ»-ը, և սա լավ է: Սակայն վատ է, որ թերթը չի նկատել ամենակարևորը: Հայաստանում և Բելառուսում նման են ոչ թե վարչակարգերը, այլ ընդդիմությունները, որոնք, ժողովրդական աջակցություն չունենալով, իրենց հույսը դրել էին օտարների օժանդակության վրա: Իսկ վարչակարգերն իրականում այնքան տարբեր են, որ շփոթելն ուղղակի անհնար է՝ Հայաստանինը՝ օտարների խամաճիկ, Բելառուսինը՝ նրանց արհամարհող, Հայաստանինը՝ օլիգարխիական, Բելառուսինը՝ ժողովրդական: Ու թեև հայերիս երազը Լուկաշենկոն չէ, միևնույն է, նրա և նրա ընդդիմադիրների օրինակը բավականին ուսանելի է այն իմաստով, որ ոչ մի ընդդիմության չեն փրկի արտասահմանյան ներարկումները, եթե նա չի սնվում սեփական ժողովրդի ակունքներից և չի ծառայում նրա նպատակներին:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԵՍԱԿԵՏ

ԱՄՆ-Ի ԽԱՆԳԱՐՈՒՄ Է ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերջերս «Հայկական ժամանակ»-ը թարգմանաբար հայ ընթերցողին էր ներկայացրել ԱՄՆ Արտաքին հարաբերությունների խորհրդի նախագահ Ռիչարդ Հաասսի հեղինակած հոդվածը, որում նա խորհուրդ է տալիս վերանայել պետությունների ինքնիշխանության սկզբունքը:

Հայտնի է, որ մինչ օրս, համաձայն միջազգային այդ սկզբունքի, պետությունները համաշխարհային քաղաքականության հիմնական խաղացողներն են: Բոլոր կառավարություններն իրենց երկրների սահմաններում կարող են անել այն ամենը, ինչ ցանկանում են, սակայն ոչ մի իրավունք չունեն այլ երկրների նկատմամբ: Միջազգային իրավունքի այս հիմնարար նորմն այլևս խանգարում է ամերիկացիներին:

«Ինքնիշխանությունը կուռք մի դարձրեք»,– խորհուրդ է տալիս Հաասսը և ավելացնում, որ այսօր անհրաժեշտ է մշակել այնպիսի նոր մեխանիզմներ, որոնք համաշխարհային մյուս խաղացողներին հնարավորություն կտան մասնակցել ոչ միայն համաշխարհային, այլև տեղական կառավարմանը: Նա մասնավորապես նկատի ունի, որ ինքնիշխան պետությունները պետք է պատրաստ լինեն անհրաժեշտության դեպքում իրենց ինքնիշխանության որոշակի մասը զիջել համաշխարհային կառույցներին: Ըստ Հաասսի, դա անհրաժեշտ է, որպեսզի միջազգային համակարգը կարողանա գործել:

Նրա կարծիքով, աշխարհի մի շարք պետություններ, որոնք ցանկանում են ինտեգրվել ժամանակակից գլոբալացման գործընթացներին, արդեն պատրաստ են հրաժարվել իրենց ինքնիշխանության որոշ տարրերից: «Գլոբալացման պայմաններում մյուս պետությունները նույնպես պետք է այնքան խոհեմ լինեն, որ նվազեցնեն իրենց ինքնիշխանությունը հանուն իրենց իսկ անվտանգության ապահովման, քանի որ նրանք չեն կարող մեկուսանալ այն ամենից, ինչ տեղի է ունենում իրենց շուրջը»,- ավելացնում է պարոն Հաասսը և գրեթե սպառնում. «ինքնիշխանությունն այլևս չի կարող անվտանգության երաշխիք լինել»:

Պետություններին ինքնիշխանությունից զրկելու ամերիկացիների ցանկությունն այնքան մեծ է, որ նրանք դրա համար պատրաստ են օգտագործել ցանկացած առիթ: Մինչ օրս դա արվում էր միջազգային ահաբեկչության աղբյուր լինելու, ատոմային զենքի տարածման կամ նման այլ մեղադրանքներով: Հիմա նրանք պատրաստվում են ինքնիշխանությունից զրկել նույնիսկ այն պետություններին, որոնք «համապատասխան ռեսուրսներ չունենալու պատճառով չեն կարողանում ապահովել իրենց քաղաքացիների հիմնական կարիքները»: Պատկերացնում եք, մի օր ԱՄՆ-ը կարող է հայտարարել, որ Հայաստանում աղքատների թիվը մեծ է, մեր կառավարությունն էլ դրա դեմ պայքարելու միջոց չունի, ինչի պատճառով մեծ թվով մարդիկ արտագաղթում են երկրից, և դա բավարար կլինի՝ մեր երկրի ինքնիշխանությունը վերացնելու համար:

Ամերիկյան երազն այն է, որ ինքնիշխանությունը պայմանագրային բնույթ կրի: Այսինքն՝ ինքնիշխան լինեն միայն այն պետությունները, որոնք ինչ-ինչ պարտավորություններ են ստանձնում, օրինակ, պարտավորվում են ահաբեկիչներին չհովանավորել, չօգտագործել և չվաճառել զանգվածային ոչնչացման զենքեր, չիրականացնել ցեղասպանություն: Այս պայմանները խախտող պետությունների ինքնիշխանությունը, փաստորեն, պետք է վերացվի, և դրանք կարող են ենթարկվել պատժամիջոցների՝ ընդհուպ մինչև գրավման (օկուպացիայի): Ի դեպ, եթե իսկապես այդ չափանիշներով առաջնորդվենք, ապա օկուպացիայի ենթակա երկրների առաջին շարքում կլինեն Միացյալ Նահանգները, որովհետև հենց նրանք են աճեցրել բեն-լադեններին, միջուկային տեխնոլոգիա տրամադրել առնվազն Իսրայելին և ցեղասպանության ենթարկել հնդկացիներին:

Իրականում վերոնշյալ հոդվածի նման հրապարակումները մեկ բան են նշանակում. ԱՄՆ-ն իրեն համարում է գլոբալացվող աշխարհի միակ տերը և այլևս չի ուզում սահմանափակվել միջազգային իրավունքի ինչ-ինչ նորմերով: Նա փորձում է իր անօրինությունների համար տեսական նոր հիմնավորումներ գտնել, թեև առանց դրանց էլ կարողացածն արել է: Սակայն ցանկացած մեդալ երկու երես ունի, և նման գործողություններով այդ երկիրը միայն ավելացնում է իր հանդեպ մարդկության թշնամանքը:

«ԱԶԱՏԱԳՐՈՒՄ»
ազգային - քաղաքական
պարբերական

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
հասցե՝ Երևան, Հանրապետության փող., նրբ. 31,
հեռ. 516168, 522128, էլ. փոստ՝ azatagrum@netsys.am